19 AUG 2006

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)
Ե-40

ԵՂԻՇԷԻ

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց
աշխատութեամբ
Ե. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1957

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց հին գրաբար գրականության փայլուն կաճառի մեջ կա մի հեղինակ, որի համար կարող ենք ամենայն վստահությամբ ասել, որ նա եղել է հայ ժողովրդի ամենասիրելի հեղինակներից մեկը։ Այդ հեղինակը հռչակավոր Եղիշեն է, 5-րդ դարի հայկական հերոսամարտի՝ Վարդանանց պատերազմի անմահ ականատես պատմիչը։

Մեր նպատակը չէ այստեղ տալու Եղիշեի կենսագրությունը, լուսաբանելու նրա կյանքի և գործունեության հետ կապված այլ և այլ հանգամանքները, անդրադառնալու նրա անձի, գրվածքի և ժամանակի վերաբերյալ մինչև այժմ լույս տեսած քննադատություններին[1]։

Մեր այս առաջաբանը նպատակ ունի պարզաբանելու սոսկ բնագրական խնդիրներ։

⁂

Եղիշեի «Վարդանանց պատմությունը» բազմաթիվ հրատարակություններ է ունեցել (այդ մասին տես ստորև և գրքիս վերջում լիակատար մատենագիտություն), բայց այդ հրատարակություններից ոչ մեկը աչքի առաջ չի ունեցել բոլոր ձեռագրական ընթերցվածները և չի տվել գիտական հրատարակության համար անհրաժեշտ ամբողջ ապարատը։ Մեր այս հրատարակությունն այդ ուղղությամբ կատարված առաջին փորձն է և մենք այդ գործը կատարելիս աչքի առաջ ենք ունեցել և օգտագործել ենք՝ ա) այն բոլոր ձեռագրերն ու ճառընտիրները, որոնք գտնվում են ՀՍՍՌ Պետական Մատենադարանում, բ) Վենետիկի ձեռագիրը և 3 ճառընտիրները, գ) ձեռագրական նշանակություն ունեցող տպագրերը (Կ. Պոլսի առաջին և երկրորդ, Վենետիկի առաջին, Վենետիկի 1852-ի և ըստ Անձևացյաց օրինակի)։

Մենք սկզբից ևեթ պետք է ասենք, որ Եղիշեի տեքստը մյուս մատենագիրների տեքստերին նման չէ։ Եղիշեի տեքստը մի տեսակ կանոնական բնույթ է ստացել և փոփոխությունները նրա մեջ սակավ են, այն աստիճան, որ նրա ձեռագրերը դժվարությամբ են խմբերի բաժանվում։ Զանազան ձեռագրերի հիման վրա կատարված մինչայժմյան հրատարակություններն արդեն ապացույց էին, որ շատ նոր բան սպասել չէր կարելի։ Այնուամենայնիվ բնագիրը շատ տեղերում ճշտվում և ավելի որոշ է գտնում. Եղիշեի բնագրից անհետանում են այնպիսի սխալ ընթերցվածները, ինչպես առաջին յեղանակում «Գդացն» կամ «Գթացն» թյուրիմացություններ առաջ բերող անմիտ ընթերցվածն էր, կամ վեցերորդ յեղանակում (132_{20}) «Թուղթ մի ի Վրաց աշխարհէն և թուղթ մի յԱղուանից աշխարհէն», որոնց փոխարեն գրվում է ճիշտը՝ «Թուղթ մի ի Վրաց աշխարհն և թուղթ մի յԱղուանից աշխարհն» և այլն և այլն: Վերջապես, սրանով առաջին անգամ գիտական աշխարհի առաջ է գրվում Եղիշեն իր բոլոր կարևոր ընթերցվածներով, այնպես որ հետաքրքրվող բանասերն այսուհետև այլևս կարիք չի ունենա դիմելու ձեռագիրներին՝ բոլոր ձեռագրական տվյալներն ամփոփված գտնելով սրա մեջ:

---

[1] Այդ ամենի մասին ցանկացողը կարող է տեղեկանալ Եղիշեի «Վարդանանց պատմությունը» գրքի աշխարհաբար թարգմանության ներածությունից. տես՝ Եղիշեի Վարդանանց պատմությունը՝ թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով պրոֆ. դ-ր Ե. Տեր-Մինասյանի, Հայպետհրատ, Երևան, 1946, էջ 16—95։

* * *

Մի քանի խոսք Եղիշեի «Վարդանանց պատմության» յեղանակների մասին: Թեև ընծայականում ասված է, որ յեղանակների թիվը յոթը պետք է լինի, բայց մենք այժմյան հրատարակությունների մեջ ունենք նաև «Արտաքոյ եօթն յեղանակին ութերորդ» յեղանակը: Այս վերնագիրը տալիս են նաև բոլոր ձեռագիրները, բացի Բ-ից և Ճ^{14}-ից: Բ-ն (գրված 1207 թ., մեր ամենահին ձեռագիրներից մեկը) տալիս է «Արտաքոյ վեց յեղանակէն ութներորդ՝ դարձեալ վասն Նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայիցն Ղևոնդեանց», իսկ Ճ^{14}-ը (1456 թվականին գրված) պարզապես ունի «Ութներորդ յեղանակ՝ դարձեալ վասն Նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայից և կատարումն վկայութեամբ ի տէր»: Այս խառնաշփոթությունն առաջ է եկել այն հանգամանքից, որ Եղիշեի «Վարդանանց պատմության» Պետական Մատենադարանում գտնված 16 լրիվ ձեռագիրներից 14-ը, ինչպես նաև Վենետիկի ձեռագիրը և Երուսաղեմի երկու ձեռագիրները բոլորովին չունեն հինգերորդ յեղանակ ստորաբաժանումն իր վերնագրով, թեև նյութը լրիվ ունեն: Միայն Դ ձեռագիրը (№ 1886, ենթագրաբար ԺԴ դարու) թեև ունի լրիվ տեքստը, բայց սա էլ չունի VI յեղանակ ստորաբաժանումն իր վերնագրով, այսինքն՝ այն, ինչ որ ուրիշները դնում են վեցերորդ յեղանակի տակ, սա դնում է հինգերորդ յեղանակի տակ: Այսպես են վարվում նաև, բացի ԲԴ ձեռագիրներից, Ճ^{1}Ճ^{2}α ճառընտիրները: Նույն վիճակն ունեն նաև Բ. Կյուլեսերյանի նկարագրած 2 ձեռագիրները: Նրանցից Բաղեշի Ամրտոլ վանքի ձեռագիրը (գրված ՇՀԹ=1130 թ.) միացնում է հինգերորդի տակ հինգերորդ և վեցերորդ յեղանակները, իսկ Արմաշի (Դպրեվանքի) ձեռագիրը (գրված 1671 թվականին Երնջակի Շոռոթ գյուղաքաղաքում) նույն երկու յեղանակը միացնում է վեցերորդի տակ, չտալով հինգերորդն իր վերնագրով: Ուշագրավ է նաև, որ մեր № 1862 Ը ձեռագրի մեջ (գրված 1641 թվականին) հինգերորդ յեղանակի առթիվ ստորին լուսանցքում գրված է՝ «Եւ յայնմ տեղւոջ զընթերցողն մի՛ ցնորի վասն հինգերորդ եղանակին, զի օրինակն ոչ կայր և մեզ այլ եղև ոչ սակու ցնորում»: Այսպիսով, յեղանակների թվահամարների և վերնագիրների մեջ ինչ-որ մի ձեռք շատ հին ժամանակներում, համենայն դեպս ԺԲ դարից առաջ, այժմ մեզ համար անհասկանալի մի գործողություն է կատարել: Արդյոք միայն յեղանակների վերնագիրներն են խառնված, թե՞ աղավաղված է նաև Ընծայականն իր յեղանակների կարգով ու վերնագրերով, դժբախտաբար, չենք կարող ասել: Եթե Բ ձեռագիրը (գրված 1207 թվականին) իր նախնական վճռական հասած լինէր մեր ձեռքը, գուցե նպաստեր այս խնդրի պարզաբանմանը. բայց, դժբախտաբար, այդ ձեռագրի այս տեսակետից խիստ կարևոր Ընծայականը, որտեղ Եղիշէն տալիս է գլուխների կարգն ու վերնագրերը, կարկատված է և նոր գրված Զաքարիա սարկավագ պատմագրի ձեռքով 1687 թվականին, հավանորեն հնագույն 1174 թվականին գրված օրինակի համաձայն (=Ա ձեռագրին), այնպես որ Բ ձեռագիրն ու Ճ^{14}-ը նկատի ունենալով, մեզ համար լիովին պարզվում է միայն մի բան, այն է, որ հնում եղել է ձեռագիրների մի խումբ, որ 8-ի փոխարեն ունեցել է միայն 7 յեղանակ այն կարգով, որ տալիս է Բ ձեռագիրը։

Նկատի ունենալով այս հանգամանքը, այլև այն, որ խառնված են Եղիշէի միայն վերնագիրները, իսկ բուն տեքստից ոչինչ պակաս չի երևում, որ և ընդունում են բանասերները, ուստի մենք հարմար համարեցինք, ձեռք չտալով Ընծայականին, Եղիշէի յեղանակները տալ՝ հետևելով Բ ձեռագրին, միացնել հինգերորդ և վեցերորդ յեղանակները, ինչպես բոլոր ձեռագիրներում է, և ամբողջ նյութն ամփոփել 7 յեղանակների մեջ։

I

ԵՂԻՇԵԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏՊԱԳԻՐՆԵՐՆ ՈՒ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ

1. *Առաջին տպագիր, Կոստանդնուպոլիս 1764 թ.*=Տ¹: 2. *Պետերբուրգի տպագիր 1787 թ.*: 3. *Կալկաթայի տպագիր 1816 թ.*: 4. *Կոստանդնուպոլսի տպագիր 1823 թ.*=Տ²: 5. *Վենետիկի առաջին տպագիր 1828 թ.*=Տ³: 6. *Վենետիկի մնացած տպագրությունները*: 7. *Վենետիկի 1852 թ. տպագրությունը (Լիմի երկաթագիր ձեռագրի ընթերցվածներով)*=Վ¹⁸⁵²: 8. *Անձևացյաց կոչված օրինակը, Թեոդոսիա 1861 թ.*=A: 9. *Ա ձեռագիրը (№ 1890)*: 10. *Բ ձեռագիրը (№ 1888)*: 11. *Գ ձեռագիրը (№ 4809)*: 12. *Դ ձեռագիրը (№ 1886)*: 13. *Ե ձեռագիրը (№ 1920)*: 14. *Զ ձեռագիրը (№ 2559)*: 15. *Է ձեռագիրը (№ 1882)*: 16. *Ը ձեռագիրը (№ 1862)*: 17. *Թ ձեռագիրը (№ 1404)*: 18. *Ժ ձեռագիրը (№ 2639)*. 19. *Ի ձեռագիրը (№ 1889)*: 20. *Լ ձեռագիրը (№ 1482)*: 21. *Խ ձեռագիրը (№ 4351)*: 22. *Ծ ձեռագիրը (№ 4584)*: 23. *Կ ձեռագիրը (№ 573)*: 24. *Հ ձեռագիրը (№ 1458)*. 25. *Ձ ձեռագիրը (№ 1737)*: 26. *Ղ ձեռագիրը (№ 5920 աշխարհաբար)*: 27. *Ձեռագրերի խմբավորում*: 28. *Սովետական Հայաստանի սահմաններից դուրս գտնվող ձեռագրերը*: 29. *Ճառընտիրներ*: 30. *Հայսմավուրքներ*: 31. *Մեր աշխատանքի հանգամանքները*:

Ա. ՏՊԱԳԻՐՆԵՐ

1. *Եղիշեի Վարդանանց պատմության* առաջին տպագրությունը *եղել է Կոստանդնուպոլսում ՌՄԺԳ (1213+551=1764) թվականին և բռնում է ընդամենը 8+220 էջ, 20×15* սմ *մեծությամբ (տպված մասը շրջանակի հետ միասին 15,5×11,5)*:

Առաջին ճակատն է՝

Գիրք պատմութեան
Սրբոց Վարդանանց զօրավարացն հայոց
արարեալ սրբոյ Եղիշէի վարդապետին

Երկրորդ ճակատը՝

Գիրք, որ կոչի Եղիշէ պատմագիրք
շարադրեալ գիտնական և խստակրօն սուրբ վարդապետին Եղիշէի,
աշակերտի սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ
Յորում լիակատար պատմին Նահատակութիւնք սրբոց Վարդանանց
զօրավարացն Հայոց և Ղեւոնդեանց սրբոց քահանայից:

Տպագրեցաւ ի հայրապետութեան քրիստոսակերտ սրբոյ աթոռոյն Էջմիածնի՝ Տեառն Սիմէօնի սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց

Եւ ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի Տեառն Կարապետի երանիկազարդ վարդապետի, և Կոստանդնուպօլսոյ Տեառն Գրիգորի հեզահոգի վարդապետի

ի Կոստանդնուպօլիս քաղաքի

Արդեամբք և ծախիւք՝ սուրբ էջմիածնի միաբան Աբրահամ վարդապետին

Ի թուականիս Հայոց ՌՄԺԳ [=1764], յապրիլի Ժ

Ի տպարանի հանգուցեալ Աստուածատուրի

էջ 4—8. Նախերգանք «Առ ընթերցօղ սուրբ մատենիս»—«ազնուականութեան ձեռամբ նուաստ ծառայ Ստեփաննոս յԱկնայ Պետրոսեան» բանասերի կողմից:

էջ 9 բաց

էջ 10. Եղիշեի նկարը կանգնած գիրքով. տակը գրված է՝

Մեծն Եղիշէ այր հանճարեղ,
Աթենական ուսմամբ շքեղ
Պատմաբանեալ ըզՂևոնդեանց
Այլ և զօրացըն Վարդանանց»:

Նոր էջակարգությամբ էջ 3—207. Եղիշեի պատմություն Վարդանանց: էջ 208—212. Համառոտ ցանկ սուրբ գրքոյս գլխոց՝ հատուածովքն հանդերձ: Իբրև նմուշ բերում ենք՝ էջ 3 «Գլուխ Ա. Յակզբան առաջնում գլխոյ ցուցանէ, թէ որպէս նշանագրեալ է զպատմութիւնս. և թէ զի՛նչ շահից են ընթերցողքն զսա»:

Կամ էջ 203-ի վերջում ծանոթագրություն. «Ծանի՛ր, զի խաչունակ բանքն լուսնաձևի՝ են ի սրբոյն խորագրեցեալք, և մնացեալքն ի մէնջ, որպէս են նշմարեցեալք»:

էջ 212—214. «Վերջաբանութիւն վասն սուրբ գրքոյս՝ առ բարեմիտ ընթերցողս»:

էջ 215—216. Վրիպակներ հետևյալ վերնագրով. «Աստ գիցուք զսխալսն ի տպագրութենէ, և զմնացեալսն ի սրբագրութենէ՝ հանդերձ ուղղեցելովքն»:

էջ 217—220. «Յիշատակարան տպեցման սուրբ գրքոյս»:

Անհրաժեշտ ենք համարում մի քանի հատվածներ մեջ բերել «Նախերգանքից», «Վերջաբանությունից» և «Հիշատակարանից»:

էջ 6. «Նախերգանք»-ում Վարդանանց սխրագործությունը պատմելու անհրաժեշտությունը շեշտելով և ասելով, որ Եղիշե վարդապետը կատարել է այդ գործը, շարունակվում է. «Որպէսզի որդիք ընթերցեալ՝ պատմեսցեն որդւոց իւրեանց, զի անմոռաց ունելով զերևելի գործս քաջութեան որ զհաւատոյ, խրախուսեալք ի նոյն միտս վառիցուք»: Եղիշեի գիրքը տպագրվում է իբրև հոգևոր կերակուր, որպեսզի տիրոջ խոսքը լսելու սով չլինի մեզնում, ասում է հեղինակը (Ամովս մարգարե Ը 11):

էջ 213—214. «Վերջաբանության» մեջ. «...Այլ արդ՝ յայտ լիցի և այս, զի հեղինակ սուրբ գրքոյս՝ յսկզբան անդ թէպէտ խոստացեալ էր խօսել յեօթն եղանակս, և այլ ինչ յաւել ի նոսա, սակայն աստ ի վանումն ոմանց տաղտկացմանց և ի նկրտումն որպէս ախորժմանց զերկարագոյնս ի նոցանէ ըստ զանազանից պարբերութեանց խորագրելով ուղղեալ հատուածս ցուցի։ Յորս զթիւ չարկեալ և զպատմելն եդի դիմաւն երրորդաւ, զի մի ընդ ոսկի բանս սորոյն՝ յապիկարէս կապարեայ ինչ խառնեալ ձեղ ցուցցի։

Նաև զայսու մի զանց եղիցի, թէ խորագիր հեղինակին հինգերորդ գլխոյն չէր յօրինակին։ Եւ մեր չեղեալ ձեռնհաս սուրբ գրքոյս կրկին օրինակաց՝ ունելով զխիղճ մտաց՝ ոչ սակաւ տարժանեալ եղէ, թէ գուցէ գլուխն այն պակասեալ իցէ. թէև ըստ իմն իմացման՝ խորագիրն այն ինչ սակ հատեալ՝ գեթ վեցերորդին է անդր մուծեալ. ուստի ըստ խառնման սորոյն եդև կարգագրեալ»։

217—220. Հիշատակարանում—«Փառք... որ... ետ կարողութիւն մերս անարժանութեան՝ հասանել ի կատարումն տպեցման գրքոյս, ի ՌՄԺԳ թուին ի յուլիսի ամսոյ Ժ...Արդեամբք և ծախիւք սրբոյ Աթոռոյն Էջմիածնի բազմաշխատ միաբան Աբրահամ վարդապետին, որ ըստ գրաւէր բարուց իւրոց՝ զայս շահաւէտ գիրքս ես յօժարեցաւ ի տպել վասն երկուց պատճառաց։ Նախ՝ զի ի ՌՄԺԲ թուին՝ յԶմիւռին քաղաքի (նորին յայնժամ առաջնորդ գոլով) տպեցուցեալ էր զգիրքն Եզնակայ Կողբացւոյ, որ ներհուն մտօք և հաւաքաբանական ոճիւ եղծանէ զաղանդն մոգութեան՝ զկրօնն զրադեշտական, որպէս յայտ է զնոյն գիրքն ընթերցողաց։

Այլ զի մի աւելորդ և անօգուտ համարեսցի ոմանց՝ աշխատութիւն գերիմաստ սրբոյ վարդապետին (որպէս տապարաւ մժղուկս հալածողի), վասն այնորիկ և զգիրս պատմութեան սրբոյ վարդապետին Եղիշէի նորին ուսումնակցի՝ ետ տպագրել. զի ընթերցողք սորին՝ ծանիցեն զգժնդակ չարութիւն նոյն վերոյիշեալ մոլորութեանն. (որում կուրացեալքն գրեթէ հրձիգ առնել կամէին զսուրբ եկեղեցիս Հայաստանեայց. մինչև սուրբ և ընտրեալ առաջնորդաց և նախարարաց մերոց՝ մահու և արեամբ չափ մրցելով՝ հազիւ կարացին շիջուցանել զբոց նորին) և հարկաւոր և պիտանացու վարկցին զաշխատութիւն սրբոյ վարդապետին Եզնակայ, նաև զտպագրեցումն սոփեստի նորին՝ իբր զօրեղ և ազդու դեղ՝ ընդդէմ մահաբեր ցաւոց և մեծի հիւանդութեան պատրաստեալ։

Երկրորդ՝ զի երանելի վարդապետն Եղիշէ՝ յազգէս մերմէ գոլով և ունելով զմեծ սրբութիւն, զիմաստութիւն, և զաթենական ուսման ճոխութիւն, ոչ վայելուչ վարկաւ նաև աշխատութեան սորին՝ (որ է ներկայ գիրքս) մնալ ըստ գանձու ընդ երկրաւ ծածկեցելոյ. մինչ բաց ի տակաւուց՝ բազումք սովաւ փարթամանալ ոչ կարէին։ Քանզի՝ չքնաղաշար մատեանս այս՝ ոչ սակաւ հոգևոր հարստութիւնս յինքեան ունի պարունակեալ։ Այսինքն՝ զի է իբր քրիստոնէական ուսման ճաշակ. արարողութեանց սրբոյ եկեղեցւոյ անկարծիք վկայութիւն. ուղղափառ դաւանութեան տիպ. վասն հաւատոյ նահատակութեան քաղցրութիւն. աղօթախօսութեան հատուած. հոգեկան եռացութեան և արտասուաց բղխման ուժգնապէս գրգռիչ. ազգասիրութեան և հայրենի սուրբ օրինաց սակի՝ քաջութիւն և հոգևոր նախանձավառութիւն. աւանդապահից ժողով. արեամբ ներկեալ նահատակաց մերոց, թէ կարգաւորաց և թէ աշխարհականաց, յականէ յանուանէ յիշատակութիւն. յատուկ ազգին մերոյ մակաբեան գործ և տեղի պարծանաց։ Նաև ըստ իմաստասիրացն սահմանի, դիմօք՝ պատճառօք՝ տեղեօք՝ և ժամանակօք՝ մեծագործութեան պատմութիւն։

Արդարև՝ դա ընթերցմամբ խոկացողացն ի մանկութենէ շարադրութեան օրինակ և հայկաբանութեան գաղափար։ Յիրաւի ի սմա երեք մեծ հաւատ և մեծ հաւատոյ զօրութիւն. յոյժ սէր և յոյժ սիրոյ ներգործութիւն. շատ յոյս և շատ յուսոյ հաստատութիւն և ամենեքին անկեղծութիւն, որ յայտ է բազում անգամ դաս ընթերցողաց։

Վասն որոյ զգանձատիպ և զոսկեղէն գիրքս կամեցաւ ի լոյս ածել՝ զի ամենեքեան դա վերծանելով հմտասցին. և որոց հարց և նահատակաց մերոց զանազան առաքինութեանցն նախանձաւորք լինիցին։

Արդ յիշեսջիք ի Քրիստոս ի մաքուր մաղթանս Ձեր զվերայիշեալ Աբրահամ վարդապետն Աստապատցի հանգերձ հոգևոր և մարմնաւոր ծնողիւք և եղբարբք իւրովք։ Ընդ որում յիշման արժանի համարեսջիք և զօրինագրօղ ճառընտիրս այսորիկ՝ զԱկնցի ուսումնասէր տիրացու Ստեփաննոսն Պետրոսեան, և զտիրացու Պետրոսն Կոստանդնուպօլսեցի, որ զբուն գաղափարն գրքոյս անձանձիր ընթեռնալ օգնելով սրբագրողին ի յանկնդրութիւն նորին. նաև զտիրացու Մելքիսեդն զգծօղ յիշատակարանիս. որ ոչ սակաւ աշխատանս կրեաց յերթևեկս ի տպագրումն գրքոյս. զորս Տէր զարդարեսցէ մեծագոյն շնորհիւ իւրով և պահեսցէ ի ծոց սրբոյ եկեղեցւոյ, Ամէն։

Նաև յետոյ՝ յիշեսջիք և զտպագրող սորին՝ զհանգուցեալ Աստուածատուրի որդի զՅօհաննէս դպիրն պարտաւոր. հանդերձ յոգնաջխատ որդւովն իւրով տիրացու Կարապետիւ, զգիրս կազմարեալս շարօղիւ, վաճառեցելոյն ի ծառայութիւն խնդրողաց փոխանակ ինքեանն՝ առեալ շնորհիւ։

Այլ և զքրտնաջան մշակն գործարանի նորին՝ զտէր Պօղոսի որդի՝ զտիրացու Կիրակոսն Մանազկերտցի։ Որպէսզի և ինքն Տէրն մեր Քրիստոս առհասարակ յիշեսցէ ի բարին ի միւսանգամ գալստեանն, ըստ մեծի իւրում գթութեանն, որում ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն փառք յաւիտեանս Ամէն։

Վերջ»։

Այս առաջին տպագրությունը մեր հրատարակության մեջ նշանակված է Տ^{1} տառով։

2. Երկրորդ տպագրությունը եղել է ՌՄԼԶ (=1787) թվականին Ս. Պետերբուրգում, մեծությունը 15×9 (տպ. 11×6) սմ.։

Գիրքը բաղկացած է 413 էջից։ Վենետիկում եղած օրինակը, անշուշտ, պակասավոր է, այդ պատճառով է Ա. Ղազիկյանը գրում՝ «...Մխիթարյանց սույն տպագրության էջերը 413 կդնե. չեմ գիտեր ինչու» (Նոր Մատենագիտություն, էջ 571)։

Վերնագիրն է՝ «Գիրք որ կոչի Եղիշէ պատմագիրք։ Շարադրեալ գիտնական և խոստիկոն սուրբ վարդապետին Եղիշէի, աշակերտի սրբոց Թարգմանչացն մերոց Իսահակայ և Մեսրոպայ։ Յորում լիակատար պատմին նահատակութիւնք սրբոց Վարդանանց զօրավարացն Հայոց և Ղևոնդեանց սրբոց քահանայից»։

Վերստին տպագրեցեալ յեօթներորդում ամի հայրապետութեան լուսանկար մօրն մերոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի՝ Տեառն Ղուկասու սրբազնասուրբ կաթուղիկոսի ամենայն Հայոց։

Հրամանաւ իշխանազնեայ Տեառն Յովսէփայ սրբազան արքեպիսկոպոսի և առաջնորդի ազգին Հայոց որք են ընդ տէրութեամբ Ռուսաց։

Արգեամբք և ծախիւք բարեպաշտօն և ազնուատոհմ Մանիչարեանց Աստուածատրեան ազնիւ պարոն Մարգարին

Յամի Տեառն 1787: Իսկ ի Թուին Հայոց ՌՄԼԶ.
Ի Սանկտ Պետերբուրգ
Ի տպարանի Խալդարեանց պարոն Գրիգորի
Կրկին հրամանաւ կառավարչացն բարեկարգութեանց.

Այս հրատարակությունը առաջնի անփոփոխ և ստրկական երկրորդ տպագրությունն է, այն աստիճան ստրկական, որ էջ 397—405 տպելով «Համառօտ ցանկ սուրբ գրքոյս», չի հասկացել, որ անհրաժեշտ է նշված հատվածների էջերը հարմարեցնել իր տպագրությանը, այլ նշանակել է I տպագրության էջերը, որի հետևանքով նշանակված ոչ մի էջում չի կարելի գտնել մատնանշված նյութը, քանի որ I տպագրությունն ունի 220 էջ, իսկ այս II տպագրությունը՝ 413 էջ:

Տարբեր է, իհարկե, միայն էջ 410—413 «Յիշատակարան տպեցուցանողի սորին» հատվածը, որի մեջ խնդրվում է «յաղօթս յիշել» «Նոր Ջուղայեցի ազնուատոհմ Մանիչարեանց բարեպաշտօն և յոգնահանճար ազնիւ պարոն Մարգարին»—անուն-անուն ծնողներով, եղբայրներով, կողակցով, կենդանի և մեռած զավակներով և այլն: Ապա հայտնվում է, որ տպարանի տեր ու գործավար պարոն Գրիգոր Խալդարյան Ջուղայեցին մեռել է 1787 թվականի օգոստոսի 8-ին, և գործն ավարտել է նրա որդին՝ պարոն Մկըրտումը:

Այս տպագրությունը ոչ մի արժեք չունի բնագրական տեսակետից, ուստի և նրա ընթերցվածները մեր հրատարակության մեջ առնված չեն:

Այս տպագրության հետ կապված անհրաժեշտ է պարզել նաև հետևյալը: Ճիշտ է նկատում Ա. Ղազիկյանը (անդ, էջ 571), որ 1774 թվականին Պետերբուրգում Եղիշեի հրատարակություն դժվար թե եղած լինի: Այդ տպագրությունը չեն հիշատակում ո՛չ Միանսարյանց և ո՛չ էլ Գր. Խալաթյանց:

Թյուրիմացության արդյունք պետք է համարել նաև իբր Նոր-Նախիջևանում 1787 թվականին կատարված տպագրությունը: Ամենայն հավանականությամբ, եթե իրոք այդպիսի տիտղոսաթերթ ունեցող հրատարակություն կա, դա նույն վերևում նկարագրված հրատարակությունն է, որ նրա հրատարակիչ Յովսեփ Արղությանը կարևոր է համարել տիտղոսաթերթը փոխելով լույս ընծայել նաև իր թեմի ամենահայաշատ Նոր-Նախիջևան քաղաքում:

3. Երրորդ հրատարակությունը եղել է Կալկաթայում 1816 թ.: Տես Մատենագիտություն:

4. Չորրորդ հրատարակությունը եղել է Կոստանդնուպոլսում Հայոց ՌՄՀԲ (=1823) թվականին և բաղկացած է 239 էջից:

Վերնագիրն է՝

Պատմութիւն նահատակութեան սրբոց Վարդանանց, և Ղեւոնդեանց քահանայից արարեալ սրբոյն Եղիշայի գերահռչակ վարդապետի և արքեպիսկոպոսի Ամատունեաց. և աշակերտի երանելի թարգմանչացն մերոց սրբոցն Սահակայ և Մեսրոպայ

Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի Տեառն Եփրեմի աստուածընտիր կաթուղիկոսի ամենայն Հայոց
և ի պատրիարգութեան սրբոյ աթոռոյն Երուսաղէմի Տեառն Գաբրիէլի շնորհափայլ արքեպիսկոպոսի
Հրամանաւ և արդեամբ Կոստանդնուպօլսոյ պատրիարգ Տեառն Պօղոսի արքեպիսկոպոսի Անդրիանուպօլսեցւոյ
Տպեալ
ի Կոստանդնուպօլիս
ի տպարանի մայր եկեղեցւոյս սուրբ Աստուածածնի
Աշխատասիրութեամբ Տ. Անդրէաս վարդապետի Նարինեան
Ակնեցւոյ
1823. ՌՄՀԲ

Հառաջաբանից (էջ 3—6) բերում ենք հետևյալ հատվածը.

Եղիշեի Պատմության Նշանակությունը բացատրելուց հետո...

«Վասնորոյ և ոմանք ի բարեպաշտից մերազնեայ բանասիրաց փափագօղ եղեալ այսմ ցանկալի գանձու՝ կամեցան սեղանաւորել ի հոգիս կարօտելոց. բայց արգիլունք իրացն ոչ ըստ արժանւոյն ի դէպ ելանէին։

Զի ըստ ժամանակին ունելով առձեռն պատրաստ զմի միայն գաղափար աղաւաղ և սխալ, բարեմիտ իմն երկիւղածութեամբ՝ զի մի գուցէ հնութեամբ ժամանակի և այն խապառ անհետ լինիցի, և որք միանգամ ցանկան վայելել՝ անճաշակք ի քաղցրութենէ նորա մնասցեն, տպագրեցին զայն ի Կոստանդնուպօլիս, յամի Տեառն 1764։

Յորում տեսանին բազմադիմի վրիպակք է՛ ուրեք՝ զի իմաստ բանիցն գլխովին ընդհակառակն է շրջեալ. և է՝ զի պակասութեամբ կամ այլայլութեամբ բառից անիմանալի գործեալ. վասնորոյ և ընթերցանելեացն ոգիք ոչ որպէս արժանն է քաղցրանային. և ո՛չ յարգ և վաստակ բարեացապարտ մատենագրին երևէին։ Զայս ամենայն զոր ասացաք՝ և առաւել քան զայն՝ կարէ տեսանել ընթերցասէրն ի բաղդատելն զսա ընդ հնոյն։

Եւ զի տեսանելով մեր՝ թէ նաև աղաւաղ տպեալքն օր ի յօրէ սակաւագիւտ եղեալ են և ծանրագին, և փափագօղք և խնդրօղք բազումք. շարժեալ ի սիրոյ ազգիս հրաման առաք նորոգ սրբագրութեամբ ի տիպ արձանացուցանել՝ ըստ ընտրելագոյն և անսխալ գաղափարին, զոր հաւատարիմ գրչութեամբ ընդօրինակեալ էր ի Հայաստան բարեյիշատակ Գէորգ դպիրն պալատական, որ և ունէր յիշատակարան՝ օրինակ զայս.

«Գրեցաւ պատմական մատեանս սրբոյն Եղիշայի ի Մեծն Հայաստան, ի թուականին Հայոց ՌՄԼ, գրչութեամբ Գէորգայ ուրումն անարժանի Կոստանդնուպօլսեցւոյ, և այն՝ յօրինակէ իմեքէ հնագունէ, որ էր գրեալ յԱրարատեան աշխարհի ի թուականութեան Հայոց ՌԺԶ, յաւուրս հայրապետութեան Տեառն Ներսէսի, եղբօր Գրիգորիսի, որ նստէր ի Կլայն հռովմեական»։

Ստորագրել է. «Մնամ վասն ձեր միշտ աղօթարար նուաստ ծառայ ծառայից աստուծոյ Պօղոս արքեպիսկոպոս Անդրիանուպօլսեցի և պատրիարգ մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսի»։

Տեքստը. էջ 7—214։

էջ 215—218. Հաւելուած—խօսք յաղագս պատմական գրոցն Եղիշէի. հանեալ ի պատմութենէ Թովմայի վարդապետի և պատմչի տանն Արծրունեաց։ Վասն արիւնահեղին Բարծումայի։

էջ 219—227. Ցանկ գրքույս (անվանացանկ՝ համառոտ բացատրություններով):

էջ 228—239. Բացատրութիւն անծանօթ և դժուարիմաց բառից այսր մատենի (մեծ մասամբ Վարդան գրոց բառարանի սխալաշատ բացատրությունները, ինչպես օր. «Բումիզ է բառ պարսկական, զորմէ ասի ի հին բառարանի մերում, Գոմեզն օշնան խոտ է, զոր այլ գիրք օճառ ասեն լուալեացս*»):*

Այս, թվով չորրորդ, տպագրությունը մեր հրատարակության մեջ նշանակված է Տ^2 տառով:

5. *Եղիշեի հինգերորդ տպագրությունը եղել է 1828 թվականին Վենետիկում, փոքրադիր 12°, ընդամենը 408 էջ. «Հրատարակիչն է հ. Ա. Բագրատունին, որ և սկիզբը՝ «առ Եղիշէ» վերնագրով գեղեցիկ ուղերձ մ'ունի» (Ա. Ղազիկյան, անդ, 572):*

Առաջին ճակատ. *Եղիշէի սրբոյ վասն պատերազմին Վարդանանց. ի Վենետիկ, 1828:*

Երկրորդ ճակատ. *Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին: Ի Վենետիկ, ի սուրբ Ղազար, ՌՄՀԷ:*

1—4 շապիկներ
5—6 ուղերձ «առ Եղիշէ».
7—362 Եղիշեի տեքստը.
363—378 Նորին Եղիշայի վարդապետի բան խրատու յաղագս միանձանց
379—381 առ Բանասէրս
382—392 Այլ ընթերցուածք
393—408 Ցանկք անուանց:

Մեջ ենք բերում «առ բանասէրս» հատվածը, էջ 379—381.

«Ըստ յաճախել օրինակաց գրոց՝ բազմանան և կրկին վրիպակք գրչաց, որ ակամայ և որ կամաւոր առ տգիտութեան. զայսր փորձ գիտէ և Եղիշէ՝ ամենեցուն ցանկալի մատեան: Որ ի մեր ձեռս եկին օրինակք վեց էին, չորք ամբողջ, երկու ի մասնէ. երիցն ևեթ թուականք յայտնի. ՌՃԻ, ՌՃԽԶ, ՌՄԼ. յորոց զառաջին զհնագոյնն, և ստուգագոյն քան զամենայն գտեալ, զնոյն առաք մեզ յօրինակ, զակամայ և զյայտնի սխալմունս գրչին ուղղեալ յայլոցն միաբանութենէ: Իսկ թուեցեալն ոմանց ընտրելագոյն և անսխալ հաւատարիմ գրչութիւն՝ ՌՄԼ օրինակն, իբրև ի հնագունէ զաղափարեալ, գրելոյ ի ՌԺԶ, մանրախուզիւ քան զբնաւսն փարթամագոյն գտաւ երկատեսակ վրիպակօքն:

«Թէպէտ մատենագիրն զհատածս գրոցն և յեղանակ և գլուխ կոչէ ի յառաջաբանին՝ բայց գրչագիրք ի կարգի անդ ուրեք ուրեք յեղանակ միայն ունին, և գլուխ և ոչ ուրեք. սմին իրի և մեք զայն կալաք: Առաջին յեղանակին չիք գլուխ և մակագրութիւն ի գրչագիրս, այլ կից գնայ ընդ յառաջաբանին. սակայն որպէս այլոց՝ և մեզ պատշաճ թուեցաւ որոշել զայն ըստ նորին մատենագրին ակնարկելոյ, միայն ուր ի դէպ ևս թուեցաւ մեզ, մեք անտի հատաք:

«Որպէս և բիւզանդացւոց առաջին տպագիրն ազգ առնէ, խորագիր հինգերորդ յեղանակի չիք և ոչ ի մի գրչագիր. այլ վեցերորդ զնոյն մակագրեն՝ նորին վեցերորդին վերնագրովք, և միահետ տանին մինչև ցևթ-

ներորդն, բայց միայն ի միոյ՝ որ հինգերորդ կոչէ զայն, սակայն և նա նովին վեցերորդին մակագրով: Մեր ըստ յառաջաբանի մատենագրին մակագրեալ զայն, գլուխ վեցերորդին չկամեցաք առ ժամս խախտել յերից առաջնոց քան զմեզ տպագրութեանցն: Եւ չունիմք ասել, հինգերորդ յեղանակին ինչն արդեօք կորուսեալ իցէ կամ ի Բարձումայէ խառնամանկեալ. եթէ գլուխ վեցերորդին այսր անդր անկեալ վասարանդի: Կարգ պատմութեանն, թէպէտև անընդհատ, չտայ ինչ հաւաստի գուշակել:

«Այսչափ ինչ ի հարկէ հաւատարմութեան ծանօթս տուեալ բանասիրաց, կարգեսցուք զկարեւորն յայլեայլ ընթերցուածոց օրինակացն»:

Այս հինգերորդ տպագրությունը մեր հրատարակության մեջ նշանակված է Տ^{3} տառով:

6. Վենետիկի մնացած տպագրությունները (1838, 1842, 1859, 1864, 1893, 1902/03) և Երուսաղեմի 1865 թ. տպագրությունը բնագրական արժեք չունեն, այլ նախորդ, գլխավորապես 1828 թվականի տպագրության արտատպություններ են աննշան փոփոխություններով, որոնք մեր հրատարակության մեջ առնված չեն:

7. Արժեքավոր է, այն էլ միայն մասամբ, Վենետիկի 1852 թվականի հրատարակությունը, 394 էջից բաղկացած, որովհետև այդ տպագրության համար օգտագործված է Լիմի երկաթագիր ձեռագիրը, որը, սակայն, դժբախտաբար լրիվ չի եղել: Այստեղ գտնում ենք այդ հրատարակության ազդը.

«Զորոյ վարդապետին Եղիշէի զպատմութեան գիրսն կամեցեալ նորոգ ի լոյս ընծայել, յաւելեալ եդաք և զտարբերութիւնս զանազան յերկաթագիր հին օրինակին, որ ի Լիմ. անապ. զի ոչ անթերի՝ այլ միայն առաջնոյ և երկրորդի գրոցն հին էր գրչութիւն, և ի բիւզանդացւոց տպագիր օրինակացն լրացեալ նոտարագի տառիւք, զորս մեք ըստ առաջին մերումս տպագրի յերիւրեալ թողաք անփոփոխ»:

Այս նկատի ունենալով մենք համեմատել և նշել ենք այս տպագրության միայն Ա. և Բ. յեղանակների տարբերությունները:

Այս տպագրությունը մեր հրատարակության մեջ նշանակված է Վ^{1852} տառով:

8. Մնում է մեզ հիշատակել, ի վերջո, Եղիշեի այսպես կոչված Անձևացյաց օրինակից արված առաջին տպագրությունը Թեոդոսիայում 1861 թվականին, որից արտատպված են հետագա հրատարակությունների մեծ մասը (Կոստանդնուպոլիս 1871, 1873, Տփխիս 1879, Մոսկվա 1892, Տփխիս 1904, 1912, 1913):

Այս տպագրության վերնագիրը հետևյալն է.

Եղիշէի պատմութիւն Վարդանանց
Ըստ Անձեւացեաց օրինակի
Թէոդոսիա, ի Խալիպեան տպարանին 1861
է+344

Մեջ ենք բերում այս հրատարակության ներածությունն ամբողջությամբ:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Եղիշէի սրբոյ Վարդանանցն պատմութիւն *թէպէտ ի նուագս նուագս ընծայեալ ի լոյս, բայց այնպիսի իմն են պէտք ոսկեղինիկ մատենին՝ զի չև ևս ըստ արժանւոյն գտեալ է նորա մուտ ի ձեռս հասարակաց։*

Մերումս տպագրի ոչ այն և եթ է վախճան զի զհասարակացն լցուսցուք զպէտս, այլ զի և հասարակաց մասնաւորեսցուք զգանձ, որ ըստ բաղդի ի մեր ձեռս անկանէր ի ժամանակի զի ի փարիզեցւոցն քաղաքի դեգերէաք։ Դէպ եղև ճանաչել մեզ անդանօր զհնասէր ոմն այր պատուական Սըր Ջանուայթ անուն՝ որ անտի անցանէր ի դարձին յարևելից, և բարձեալ բերէր ճոխութիւն բազում հնութեանց, զորս ամբարեալն էր ի մերոց և յայլոց կողմանց Ասիացւոց աշխարհին։

Այլում թողեալ տեղւոյ և ժամանակի մանրապատում տալ նկարագիր զմէն մի նորա պատուական ճոխութեանցն, մանաւանդ զորոց ի մեր հայրենեացն էր գնոց առեալ կամ յընծայ, տեսաք ի գրչագիրս նորա և Պատմութիւն *մի* Վարդանանց, *որ թէպէտ չունէր ի վերայ զթուական գրութեանն, այլ մագաղաթն և երկաթագիր տառիցն ձևք՝ որովք հարեալ էր ի գրի, շատ իսկ ցուցանէին եթէ յոյժ հնոց ժամանակաց էր մատեանն. եօթներորդ կամ ութերորդ դարու գործ, եթէ ոչ և առաւել ևս հնագոյն։ Եւ բանիս վկայք՝ յիշատակարանքն որ այսր և անդր ի լուսանցս մատենին տեսանէին՝ հասանէին ցիններորդ դար. որպէս օրինակ իմն*

զՏէրն Անձևացեաց զմեծն Ատոմ
յիշատակի արարէք արժանի.

զի թէպէտ չցուցէ տարւոյն թիւ, բայց անշուշտ թուի մեզ եթէ այս այն Ատոմ իցէ զոր և Յովհաննէս պատմաբան կաթուղիկոս անուանէ մեծ, *յորժամ ասիցէ. «Պայազատէր զտէրութիւնն զայն* ՄԵԾՆ Ատոմ *որդի նորա (Գուրգենայ) ընդ նորա»։ Եւ զի առ Սմբատաւ Ա., Բագրատունեաց թագաւորաւն, փայլեցաւ այս Ատոմ, ապա հնագոյն քան զնա իցէ գրութիւն Վարդանանցն մատենի։*

Ի վերջ կոյս գրոցն գտաք զայս յիշատակարան.

Գրեցաւ ի ստոյգ պատմ. տանն Մամիկոնենի.
հրամանաւ
Շմաւոնի Անձևացեաց տեառն,
յիշատակ և բարեխաւս աշխարհիս:

Բայց թէ ո՛ այս Շմաւոնս, չունիմ ասել, փոխանակ զի չյարէ գրիչն զթուական ժամանակին։ Զի ոմն Շմաւոն յիշատակէ մեզ պատմութիւնն՝ Անձևացեաց տէր, այն որ ընդ Կարմիրն Վարդանայ հանդիպացաւ ի մեծի պատերազմին, ապա և կապանաց ընդ երանելի նախարարսն տանէր ժուժկալութեամբ. բայց ոչ հաւանութեան մեզ թուի եթէ նոյն Շմաւոն իցէ և որ զմատեանս զայս ետ գրել հարկանել։ Այլ ի մեծի պատուի լեալ է անշուշտ առ տեարբ տանն Անձևացեաց, զի յէջս գրոյն այս և անդ գտանին անուանք նոցա, որպէս

զԳուրգէն յիշեցէք.
Գէորգ Անձևացեաց.
Հասան տէր Անձևացւոց:

Այս օրինակ Անձևացեաց թուի անցեալ կամ պահեալ ի Նարեկայ վանս. զի անդ ուր յիշատակէ Եղիշէ յանուանս եպիսկոպոսացն որք պատասխանեցին՝ զԵղբայր եպիսկոպոս Անձևացեաց, յօրինակին գտաք յայլմէ գրչէ «զորոյ զաթոռն վիճակեալ տէրս մեր Խոսրով»: *Աներկբայ իմն թուի ինձ զմեծէն Խոսրովայ ակնարկիցէ գրիչն, զհօրէ լուսայնոյն Գրիգորի:*

Գոյ և այլ սխրալի իմն հակիրճ յիշատակարան, զոր չկարողացաք ընթեռնուլ առանց արտասուս բազումս արկանելոյ. զի ուր Եղիշէ զանուանս քաջացն դրոշմէր արանց՝ որ զանուանս իւրեանց յերկնաւորն դրոշմեցին դպրութեան, յաւելոյր ոք ի սորին կիսադողդոջ ձեռամբ և սրտիւ.

Մաղթեցէք վկայք Քրիստոսի
խաղաղութիւն նեղելոցս և փրկութիւն
աշխարհիս,
և փառաց Գրիգորիս Պահլաւունեաց
հաւատս արհականս
և մի լոկ զանունդ աշխարհուստ:

Եւ ո՞վ ոք արդեօք զԳրիգորի Մագիստրոսի զայսպիսի սրտառուչ ընթերցեալ բան, ոչ ընդ մեզ պատկառանօք համբոյր յետնումն մատուցեալ գրութեան, զնորա հառաչանս ոչ յեղյեղիցէ՝ մաղթելով զխաղաղութիւն և զփրկութիւն:

Յայս վայր հարևանցի իմն զարտաքին հանգամանաց սքանչելի գրչագրին. իսկ զներքին հանգամանացն զայս և եթ ասասցուք, զի քաջավարժ և հմուտ ձեռին է գործ և գաղափար, արժանի արդարև իշխանական տանն վասն որոյ գրեալն էր: Թողումք այլում ժամանակի նշանակել մանր զմերոյս օրինակի ի տպագրելոցն ցարդ զխտիր ընթերցուածոց. շատ լիցի ընթերցանելեացն գիտել զի ի բազում տեղիս ուր ընդ աղօտ իմն մնային իմաստք՝ արդ ի ձեռն Անձևացեաց օրինակիս պարզեալ ելանեն ի լոյս:

Ակն ունիմք եթէ ոչ ի զուր ինչ թուեսցուք մատուցեալ ի նորս տպագիր, և համարիմք զանձինս երանելիս եթէ մարթասցուք դիւրել լինել զանէնչ ցանկութեան սրտի զհոյակապ և սուրբ Մատենագրին որ ցանկայր զի պատմութիւն իւր յածիցի ի ձեռս մեծի և փոքու «Զի հանապազորդ ընթեռնուցուն, լսելով զառաքինեացն զքաջութիւն և զյետս կացելոցն զվատթարութիւն», որով յետս կալ ի յետնոյն նմանութենէ, և յառաջնոյն ջանալ հետևել քաջութեան, զի ի ջանից սոսկ եթ իցէ ակնկալել իմիք տառապեալ հայրենեաց մերոց:

Խորէն վ. Գալֆայեան:

Այս տպագրի ընթերցվածները մեր հրատարակության մեջ նշանակված են A տառով այն դեպքերում, երբ մենք չենք դիմել համեմատության համար մեր վերցրած Անձևացյաց օրինակից, նրա ընթերցվածք տեղադրում *փոխարինել ենք այլ ձեռագրական ընթերցվածով և Անձևացյաց օրինակի ընթերցվածը դրել ենք տողատակի այլընթերցվածների շարքում:*

Եղիշեի Պատմության մյուս հրատարակությունների մասին տես ստորև «Մատենագիտություն» բաժինը:

Բ. ՁԵՌԱԳԻՐՆԵՐ

Անցնում ենք Եղիշեի Վարդանանց պատմության այն ձեռագրերի նկարագրությանը, որոնք գտնվում են ՀՍՍՌ պետական ձեռագրատանը (Մատենադարանում): Ձեռագրերը նշանակում ենք հայերեն մեծատառերով:

9. *Ժամանակագրական կարգով առաջին տեղը բռնում է Ա ձեռագիրը, № 1890 (1687):*

Թերթեր—*256:* Մեծություն—*25×16:* Նյութ—*թուղթ:* Կազմ—*կաշեպատ տախտակ դրոշմազարդ:* Գրություն—*միասյուն 18×10,5 հին բոլորագիր: 3—12 թերթերը նորոգված տարբեր թղթով և բոլորագրով:* Գրիչ—*Դավիթ կրոնավոր:* Ստացող—*ինքը՝ գրիչը:* Ժամանակ—*1174:* Տեղ—*Կոշավանք:* Հիշատակարան—$209^{բ}$—$210^{բ}$: Հիշատակագրություններ—$91^{ա}$, $123^{բ}$, $130^{ա}$ և $184^{բ}$:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերնագիրը—*Պատմութիւն սրբոյն Վարդանա քաջի և հայոց սպարապետի և վկայի Քրիստոսի յԵղիշայէ սրբոյ Դաւթայ երիցու հայցեալ գրեաց·*

$3^{ա}$—$206^{բ}$	*Եղիշէի Պատմութիւն:*
$206^{բ}$—$209^{բ}$	*Վասն արյունահեղին Բարծումայի: Մի հատված Թովմա Արծրունու պատմությունից:*
$209^{բ}$—$210^{բ}$	*Հիշատակարան:*
$211^{ա}$—$213^{բ}$	*Ստորագրութիւն պատմութեան սրբոյն Սարգսի զօրավարի:*
$213^{բ}$—$234^{բ}$	*Վկայութիւն սրբոյն Սարգսի զօրավարի և որդւոյ նորա որոյ անուն Մարտիրոս որ կոչի վկայ:*
235—237	*Բաց թերթեր:*
$238^{ա}$—$253^{բ}$	*Պատմութիւն վարուց սրբոյն Յակովբա զոր գրեաց Մելիքէ աշակերտ Մարուգէի միայնակեցի:*
248	*Բաց թերթ:*
254—256	*Բաց թերթեր:*

Հիշատակարան—$209^{բ}$—$210^{բ}$: *«Փառք փրկչին և յիշատակ գրչիս Դաւիթ կոչեցեալ·*

Փառք հզօրի և ահաւորի, վեհի և մեծի, անհասի և անճառի, անսահմանի և անպատմի, անպարագրի և անորակի, անքանակի և անձևի, անչափի և անժամանակականի, փառաց փառաւորի և անմահի, եզակի և եռանձնեայ, պարզ և անշարունակ, սուրբ և վճիտ, յստակ և մաքուր, համագոյ սուրբ երրորդութեանն յաւիտեանս ամէն ամէն:

Ի հայկազեան Թուականիս վեցհարիւրերորդի և երկուց տասանց եղակաւ միով առաւելեալ, և ըստ նորում շրջանիս միոյ յարեկնի և երից տասանց և քառից երկուց. և ըստ ծննդեան կենարարին և մերոյ ազատութեան ի մահուանէ յանմահութիւն են ամք ՌՃՀԴ: Արդ, յայսմ ամի գրեցաւ գիրքս այս Եղիշէի պատմագրի և ընտիր վարդապետի, որ և տեղեակ և հմուտ էր ամենայն պատերազմաց Վարդանանց և Նեղութեանց, որ անցին ընդ աշխարհս Հայոց. որ և այլ գիրս ասացեալ կանոնականս զգուշաւորս սրբոյ եկեղեցւոյ և առաւելեալ ի վարս արդարութեան հաճոյ լինէր աստուծոյ և մարդկան. և յետ այսր՝ վարս կրաւնաւորութեան յանձն առեալ և զխստամբերութիւն ճգնութեան, պահաւք և աղաւթիւք հանդիսանայր և արդէն յայնաց ծովու ի Նուաճանգիստ փութացեալ յանապատ, ի բաց լքեալ զերկրաւորս զհետ երթայր երկնաւորին և զամենայն առաքինութիւն յանձին կատարելով, զամայութիւն սիրելով և խստարուտ կենաւք անցուցանելով զաւուրեայ կենցաղս՝ սուրբս այս Եղիշէ իբրև զանմարմինս ի մարմնի կեցեալ, և զդիւացն մարտս վանեալ. և յանապատի ուրումն յայրի վախճանեալ բարի խոստովանութեամբ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր ամէն:

Արդ ես Դաւիթ ցանկացող եղէ այսմ գրոց և գծեցի զսա ի սակս յիշատակի հոգւոյ իմոյ մեղաւք վարակելոյ, և ծնողաց իմոց. և եղբաւր իմոյ հարազատի Մխիթար կոչեցեալ, որ և սպասաւորեաց ինձ ի գրելս: Եւ գրեցի զսա ի վանս Կոշա, ընդ հովանեաւ սրբոյ Ստեփաննոսի ի մէջ սիրելի եղբայրութեանց: Արդ հայցեմ յիշել ի Քրիստոս, և Քրիստոս յիշողացդ ողորմեսցի ամէն»:

Այս ձեռագրում, ինչպես և առհասարակ ձեռագրերի մեծամասնության մեջ, հինգերորդ յեղանակն իր վերնագրով չկա: Սակայն գտնում ենք

Յեղանակների կարգը

I	3ա — 13ա անվերնագիր.	«Զբանն... ընկալաւ զվճիռ մահու»:
II	13ա — 54ա Երկրորդ. զիրացն պատահումն յիշխանէն արևելից.	«Որոց ոգիքն... երկայնութեամբ ճանապարհին»:
III	54ա — 91ա Երրորդ. վասն միաբանութեան սուրբ ուխտին եկեղեցւոյ.	«Թէպէտ և ոչ իցիմք...բուռն հարեալ էր նորա»:
IV	91բ — 99բ Չորրորդ յեղանակն. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և անօրէն ընկերաց իւրոց.	«Մինչև ցայս վայր...զբաժակն դառնութեան մահու»:
V	չիք	
VI	99բ — 123բ Վեցերորդ. կրկին անդամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից.	«Մեծ է սէրն աստուծոյ...ոչ կարէին հաւատալ»:
VII	123բ — 142ա Եւթներորդ յեղանակ, յորում նկարագրի դարձեալ առաքինութիւն Հայոց և չարագոյն ևս երևի անօրէնութիւնն Վասակայ.	«Արդ դարձեալ յայնժամ... գործոց նորա»:

VIII	*142ա—206բ Արտաքոյ եւթն յեղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայիցն.*	*«Արդ ի վեշտասաներորդի...գրաղաքամայրն բարեաց և հասցուք խոստացելոց ս՛րբեկացն աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, և նմա փառք յաւիտեանս յաւիտենից ամէն»։*

10. *Երկրորդ տեղը բռնում է Բ ձեռագիրը № 1888 (1685)։*

Թերթեր—*357*։ Մեծություն—*25,5×16,5*։ Նյութ — *թուղթ*։ Կազմ — *կաշեպատ տախտակ դրոշմազարդ*։ Գրություն—*միասյուն 21×12 բոլորագիր՝ որոշ տեղերում միջին երկաթագրի նման (տպագրված ցուցակում գրված է՝ նոտր)*։ Գրիչ—*Անդրէաս (երկրորդ մասի). առաջին մասինն՝ անհայտ*։ Ստացող—*նոյն Անդրէաս և պապ Յովհաննէս քահանայ*։ Ժամանակ—*ՈԾԶ (1207) Եղիշեի. ՈԽԱ (1192) երկրորդ մասի գրողի և ստացողի*։ Վերջին նորոգություն—*Զաքարիա սարկավագի (պատմագրի) ձեռքով ՌՃԼԶ (1687) թվին (էջ 357ա)*։ *Սկզբից 2 թերթ մի հատված Եղիշեից նոտր գրով (Զաքարիայի ձեռքով?)*։ *3ա—6բ և այլուր ընդամենը 6 թերթ նորոգված են նոտր գրով Զաքարիա սարկավագի ձեռքով*։ *Գտնված է «Իգմիւռին» քաղաքում նորոգողի եղբորորդու Կյուրեղ սարկավագի ձեռքով*։ Հիշատակարաններ—*122բ, 353բ, 355բ, 357ա, 270բ (Նորոգողի հիշատակարանը՝ էջ 357ա)*։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3ա—122բ Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց պատերազմին և վկայի Քրիստոսի Եղիշայէ սրբոյ Դաւթայ երիցուէ հայցեալ գրեալ։ Օգնեա՛ Աստուած։

122բ—342բ Աղօթից լուծմունք (մասամբ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի), տօնապատճառք և այլ ժողովածուք, ինչպես բնորոշում է նորոգող Զաքարիա սարկավագը։

343բ—353ա Սրբոյն Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոյ ասացեալ (սուրբ գրքի թարգմանությունների մասին՝ Յոթանասնից, Ակիւղաս, Օրիգենէս և այլն)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

122բ «Գրեցաւ յիշատակարանս այս վասն սուրբ նահատակութեան նախարարացն հայոց և սուրբ կանանցն. ընդ որում և զմեզ արժանի արասցէ սուրբ երրորդութիւնն տանել զյիշատակս նոցա. զի որք հաւատով տանեն զյիշատակս նոցա մասնակից արասցէ սրբոց իւրոց ի փառս ամենասուրբ երրորդութեանն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամեն ամեն ամեն։ Թւ. ՈԾԶ (656+531=1207)։

270բ «զԴաւիթ և զանարժան քահ(անայ) յիշեցէք ի Քրիստոս։ (Խորանի վերևի անկյուններում Դաւիթ*»)։*

«զԹորոս վարդապետ որդի Ալամի ստացող սուրբ մատենիս յիշեցէք ի Քրիստոս մանգունք սուրբ աստուածատի, յորժամ հանդիպիք բանի պիտանացուի կամ ուրինակ առնել որ կարիք թէ հանդիպիք. և զվարդապետն իմ զԱրաքելն զԳրիգորէս զՎարդան, զի յամենէս եղև մեզ աւգուտ»։

(Այս բառերը գրված են մի տձև խորանի մեջ. Դավթի մասին եղած պարբերությունը գրված է խորանի ճակատին՝ առանձին: Նույն էջի վրա աննշանակ հիշատակագրություններ):

$353^{բ}$—$355^{ա}$ *«Փառք ամենայնում երրորդութեանն որ արժանի արար զմեզ հանգերձեալ երբեմն մտանել յաստուածային ծաղկաւէտ փայլեալ բուրաստանս ամենայնի, զանազան և գունակ գունակ, ամենաստո, մրգաբեր, ծառայոտ, գեղեցկայզան տնկաւք, որք ցանկան յաւէտ բաղձանաւք... *զյիշատակ տէրունական տանից... սկսեալ ի Դաւթէ Յակոբայ եղբաւրն տեառն մինչև ցաւուրս սորոյ խաչին: Դարձեալ և ընթերցուածոց մեկնութիւն բոլոր աղուհացիցն և այլ ես հարցմունք զանազան և պատասխանիք բան առ բան... և այս է ցընծութիւն հոգւոյ և զուարճութիւն մարմնոյ և ուրախութիւն սրտի և ընկերութիւն մտաց, ոչ միայն ասողին, այլև լսաւղացն... որպէս Քրիստոս յայնձն էառ զմահ խաչին, նոյնպէս սորայ յանձն առեալ զարժանումն, և հաւաքեալ զգեղեցկայզան բուրաստանս, զոր ստացեալ պաշար ճանապարհին կենաց: Այլ որ զսա ունի չիք նմայ կարաւտանալ գիտութեան: Արդ շնորհիւն աստուծոյ և ողորմութեամբ նորին էութեան՝ ես մեղաւորս և անպիտանս ի կրաւնաւորս, որ անուամբ միայն ճանաչի և ոչ գործով, ստացուած ստացայ ինձ հոգևոր: Արդ որք կարդայք կամ ընդաւրինակէք, մեղաւորի և ագիտի և անարժանի բարոյ, վասնզի ոգով կուրացեալ եմ և մտաւք, որպէս ջուր (յ)որդանոս ոչ ունի դադարումն, նոյնպէս և ես ոչ ունեմ յագումն ի գործելոյ զմեղս. արդ զընթերցողս աղաչեմ և առ ոտս անկանիմ,* Անդրիասի *և ծնողաց իւրոց և եղբարց ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ մեղաց թողութիւն խնդրեցէք յաստուծոյ որում փառք յաւիտեանս ամէն»:*

Էջ $355^{ա}$ այլ գրով. «Արդ որք ընթեռնոյք կամ աւրինակէք զաստուածաշունչ կտակս զայս, մեղաց թողութիւն շնորհեցէք Յոհաննեսի *նուաստ քահանայի և հաւրն իւրոյ Կարապետի....զի էր յոյժ խոշմտեալ և աւուրք չարութեան սովու և փախստեան... և էր թուոյն Հայոց ՌԽԱ և մեք առաք զգիրքս զայս ի յիշատակ հոգւոյն սուրբ քահանային Թաչկուն և իւր երիցկնոջն...»:*

Յեղանակների կարգը

I	*$3^{ա}$—$8^{բ}$ անվերնագիր.*	*«Բանն...զվճիռ մահու»:*
II	*$8^{բ}$—$30^{ա}$ Երկրորդ. վիրացն պատահումն ի յիշխանէն արևելից.*	*«Որոց ոգիքն... երկայն ճանապարհաւն»:*
III	*$30^{ա}$—$52^{ա}$ Երրորդ. վասն միաբանութեան սուրբ ուխտին հաւատոյ.*	*«Թէպէտ և ոչ իցեմք... բուռն հարեալ էր նորա»:*

** Եղիշեի ձեռագրերի համեմատություն, համեմատեց Գարեգին սարկավագ (Հովսեփյան), Վաղարշապատ 1892, էջ Դ. ասում է՝ «այստեղից թերթ է պակաս երևի», այնինչ ոչ մի թերթ պակաս չէ: Իսկ Գարեգին սարկավագը չի նկատել եղած թերթը, կամ այդ թերթը հետո է գտնվել և իր տեղը դրվել: Հավանականը, իհարկե, առաջինն է, որովհետև ոչ մի հետք չկա որևէ թերթ հետո տեղադրված լինելու:*

IV	*52ա—57ա Չորրորդ. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց իւրոց.*	*«Մինչև ցայս վայր...զբաժակ դառնութեան մահու»:*
V	*57ա—72ա Հինգերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ Թագաւորին Պարսից (!)*	*«Մեծ է սէրն Աստուծոյ...հրամանի Թագաւորին ոչ կարէին հաւատալ»:*
VI	*72ա—84ա Վեցերորդ յեղանակն, յորում կարգադրի դարձեալ առաքինութիւն Հայոց և չարագոյն եւս երևի անօրէնութիւնն Վասակայ.*	*«Արդ դարձեալ յայնժամ...ցանկացող գործոց նորա»:*
VII	*84ա—122բ Արտաքոյ վեց եղանակէն Եւթներորդ՝ դարձեալ վասն նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայիցն Ղևոնդեանց.*	*«Արդ ի վեշտասաներորդի... ժառանգեսցուք զքաղաքամայրն բարեաց» և այլն: «Բայց և ինձ յայս ճառ պիտոյ է գալ, եթէ տէր ինքն կամեսցի»:*

Խիստ ուշագրավ է այս ձեռագրում յեղանակների բաժանումը և նրանց վերնագրերը, մանավանդ «Արտաքոյ վեց եղանակէն եւթներորդ» արտահայտությունը: Դժբախտաբար այս ձեռագրի առաջին թերթերը փչացած են եղել և հայտնի Զաքարիա սարկավագը նորոգել է այդ թերթերը սովորական ձեռագրերից մեկի, հավանորեն մեր Ա-ի, օգնությամբ: Ինչպես երևում է, եղել է ձեռագրերի մի խումբ, այժմ անհետացած, որ միայն յոթ յեղանակ է ունեցել: Սակայն այս ձեռագրի գրության ժամանակ արդեն տարածված են եղել ութ յեղանակի բաժանված ձեռագրերը, ինչպես ցույց են տալիս «Արտաքոյ վեց յեղանակէն» բառերը:

11. *Դ ձեռագիրը № 4809 (1003)*

Թերթեր—*213:* Մեծություն—*32×24,5:* Նյութ—*թուղթ:* Կազմ—*կաշեպատ տախտակ դրոշմազարդ:* Գրություն—*երկսյուն 22×7 բոլորագիր:* Գրիչ—*Վարդան:* Ստացող—*ինքը՝ գրիչը:* Ժամանակ—*ՉԾԹ—1310:* Տեղ—*Վան:* Հիշատակարան—*212ա—213ա:* Հիշատակագրություններ *11ա, 48բ, 86ա, 95ա, 122ա, 143ա, 144ա, 189բ, 200ա, 213բ:*

Դ. պրակի սկզբից պակասում է երկու թերթ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա—211բ Եղիշէի «Պատմութիւն»:
212ա—213բ Հիշատակարաններ:

Պատմության վերջում—211բ—գրված է. «Ինձ և յայս ճառ դարձեալ պիտո է գալ, եթէ տէր ինքնին կամեսցի: Եղիշա վարդապետ ասէ»:

212ա—213ա Գրչի վերջին հիշատակարանը.

«Փառք ... արժանացուցեր զփոքրս զայս զիմոց ձեռացս զպտուղ գլխաւորել և ընծաել առաջի քո, զոր բազում բաղձանաւք և յոյժ տենչանաւք ի բազում ամաց փափագէի ամայ, յաղագս որոյ երկրպագութիւն քեզ և

փառաւորութեամբ պատիւ ըստ կարի վերառաքեցի Աստուած, այլ և մաղթանս պաղատանաւք: Ընկալ տէր հաշտութեամբ ողորմածաբար ըստ երկուց լումայից, առ ի փրկանս իմո աղքատ հոգւոս, յանկաշառ և իրաւացի ատենին որ բանք սպառին և գործք թագաւորին, յորում միայն տիրէ և ուղնէ ճշմարտութիւն և արդարութիւն:

Եւ արդ ես մեղաւոր և անարժանս Վարդան ցանկացող եղէ այս սուրբ տառիս չարչա[րա]նաց սուրբ Վարդա[նա]նցն, զոր ունէի փափագ ի բազում ամաց, և կամաւ կամեցողին բարեաց յանկ [ել]եալ աւարտեցի զսա բազում աշխատանաւք և ետու զսա ընծա սուրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի (ջնջված է և վրան մատիտով գրված՝ Գէորգ զօրաւորի), որ է ի Վան քաղաքի հանդէպ սուրբ ուխտին Վարագայ: Բայց գրեցաւ սա ի թուականութեան Հայոց ՉԾԹ (759+551=1310) ի նեղ և յանբարի ժամանակի:

Արդ որք կարդէք կամ աւրինակէք, մեղաց իմոց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ, և ծնողաց իմոց և եղբարց և համաւրէն ննջեցելոց իմոց: Եւ երջանիկ վարդապետին իմո Տիրացու սուրբ և խաչ ընդ յուս կրաւնաւորի. և յիշաւղքդ յիշեալ լիջիք յԱստուծոյ կրկին կենաւք և երկու աշխարհաւք ամեն բարեխաւսութեամբ սուրբ Վարդանացն:

Եւ արդ չիք ոք որ ունի իշխանութիւն ի վերա սորայ, ոչ յիմոց և ոչ յաւտարաց. բայց տէր և իշխեցող սորայ Աստուած է և սուրբ առաքեալքս. քանզի ես յաւժար կամաւք ետու զսա սուրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի յիշատակ բարի ինձ և ծնողաց իմոց և եղբարց և ամուսնո իմո և զաւակի իմո Զաքարիոյ: Եւ մի ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի դրանէ սուրբ (տեղը ջնջված է և վրան գրված՝ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի) գրավ գնելով և ծախել և կամ գողանալով կամ [այլ] իրիք պատճառանաւք. և եթէ յանդգնեսցի ոք՝ հեռացեալ լիցի ինքն յողորմութենէն Աստուծոյ և անէծս զՅուդային առցէ: Բայց եթէ խնդրեսցեն զսա վասն կարդալո կամ աւրինակելո՝ մի խնայեսցեն, վասն զի զսա այսր աղագաւ եմ գրել, զի ամենեքեան աւգտեսցին և մեղաց իմոց թողութիւն խնդրեսցեն յԱստուծոյ, որում փառք յաւիտեանս ամէն»:

Յեղանակների կարգը

I	*$1^{\text{ա}}$—$11^{\text{ա}}$ անվերնագիր.*	*«Զբանն վասն որոյ...ընկալաւ զվճիռ մահու»:*
II	*$11^{\text{ա}}$—$48^{\text{բ}}$ Երկրորդ. զիրացն պատահումն յիշխանէն Արևելից.*	*«Որոց ազգքն...երկայնութեամբ ճանապարհին»:*
III	*$48^{\text{բ}}$—$86^{\text{բ}}$ Երրորդ. վասն միաբանութեան սուրբ ուխտին եկեղեցւոյ.*	*«Թէպէտև ոչ իցիմք... բուռն նորա հարեալ էր»:*
IV	*$86^{\text{բ}}$—$95^{\text{ա}}$ Չորրորդ. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց իւրոց.*	*«Մինչև ցայս վայր...դրժակ դառնութեան մահու»:*
V	չիք.	
VI	*$95^{\text{ա}}$—$122^{\text{ա}}$ Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից.*	*«Մեծ է սէրն Աստուծոյ... Ոչ կարէին հաւատալ»:*

VII	$122^{ա}$—$143^{ա}$ Եւթներորդ յեղանակ. յորում կարգադրի դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարագոյն ևս երևի անօրէնութիւնն Վասակայ.	«Արդ դարձեալ յայնժամ... գործոց նորա»:
VIII	$144^{ա}$—$211^{բ}$ Ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայիցն.	«Արդ ի վեշտասաներորդ ամի... զքաղաքամայրն բարեաց և այլն»:

12. Դ ձեռագիրը № 1886 (1683)

Թերթեր—232 (նշանակված է 233, բայց 222 համարակիր թերթ չկա և թերթերը վերջում 218—224 incl. խառնված են: Նշել է Սահակ վ. Ամատունին): Մեծություն—24×16: Նյութ—թուղթ: Կազմ—կաշեպատ տախտակ դրոշմազարդ: Գրություն—միասյուն 19,5×12,5 բոլորագիր: Գրիչ—Անտոն: Ստացող—Յովհաննէս սարկաւագ: Ժամանակ—ԺԴ դար (?): Հիշատակագրություններ—$80^{բ}$, $95^{ա}$, $104^{ա}$, $121^{ա}$, $124^{բ}$, $168^{ա}$, $173^{ա}$, $186^{բ}$, $187^{ա}$:

Այս ձեռագրի մասին Զենոբ Գլակ—Հովհան Մամիկոնյանի կազմակցությամբ տես Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ Աշ. Աբրահամյանի, Երևան 1941, էջ XIV:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

$1^{ա}$—$58^{ա}$ Զենոբ Գլակ—Հովհան Մամիկոնյան:
$58^{ա}$—$95^{ա}$ Յաղագս զարմից սրբոյն Գրիգորի և տեսիլ սրբոյն Ներսիսի:
$95^{ա}$—$110^{ա}$ Յովհան Ոսկեբերանի չորս ճառ:
$110^{ա}$—$115^{ա}$ Վկայաբանութիւն սրբոց քառասնիցն:
$115^{ա}$—$117^{բ}$ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի գովեստ Աստուածածնին Մարիամու:
$117^{բ}$—$121^{ա}$ Յովհան Ոսկեբերանի ճառ:
$121^{ա}$—$124^{ա}$ Տեառն Յովհաննու վասն ննջեցելոց որ ի Քրիստոս:
$124^{բ}$—$232^{բ}$ Եղիշէի «Պատմութիւն»:
$124^{բ}$ Սկզբնական վերնագիրը—«Յիշատակարան սրբոյն Վարդանայ հայոց զօրավարին»:

Նույն էջի զարդախորանի տակ հետագայում նոտր գրով նոր վերնագիր է գրված. «Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և հայոց սպարապետի և վկայի Քրիստոսի Յեղիշայէ սրբոյ Դաւթայ իրիցու հայցեալ գրեաց».

Հիշատակագրություններից բերում ենք միայն հետևյալները.

$124^{բ}$ Ստորին լուսանցքում—«զԱլինախ եպիսկոպոս ծաղկաւղակս յիշեցէք ի տէր մի ողորմայիւ և աստուած զձեզ յիշէ»:

$168^{ա}$ «Բարեխաւսութեամբ սրբոց Վարդանանցս Քրիստոս Աստուած ողորմեա ստացողի գրոցս Յովհաննէս սարկաւագին և ծնաւղաց իւրոց և ինձ մեղուցեալ գծողիս Անտոնի և ծնողաց իմոց և ամենայն արեան մերձաւորաց և որ լիով զամէնն ասէ տէր Աստուած վարձս բարեաց պարգևեսցէ սմա և ի հանդերձեալն ամէն»:

Յեղանակների կարգը

I $124^{բ}$—$130^{ա}$ անվերնագիր.	«Բանն զոր...ընկալաւ զվճիռ մահու»:
II $130^{ա}$—$149^{ա}$ Երկրորդ. գիրացն պատահումն յիշխանէն Արևելից.	«Որոց ոգիքն...յերկայն ճանապարհաւն»:
III $149^{ա}$—$168^{ա}$ Երրորդ. վասն միաբանութեան սուրբ ուխտին եկեղեցւոյ.	«Թէպէտ և ոչ իցիմք...բուռն հարեալ էր նորա»:
IV $168^{ա}$—$173^{ա}$ Չորրորդ. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց նորա.	«Մինչև ցայս վայր...զբաժակ դառնութեան»:
V $173^{ա}$—$186^{բ}$ Հինգերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ Թագաւորին Պարսից:	«Մեծ է սէրն Աստուծոյ...ոչ կարէին հաւատալ»:
VI չիք.	
VII $187^{ա}$—$197^{բ}$ Եւթներորդ յեղանակ, յորում կարգագրի դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարագոյն եւս երևի անօրէնութիւնն Վասակայ.	«Արդ դարձեալ յայնժամ...գործոց նորա»:
VIII $197^{բ}$—$232^{բ}$ Արտաքոյ եւթն յեղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայիցն Ղևոնդեանց:	«Արդ ի վեշտասաներորդի...քաղաքամայրն բարեաց» և այլն:

13. Ե ձեռագիրը № 1920 (1657)

Թերթեր—350+2 (45 և 119 կրկնված թերթեր): Մեծությունը—27×18: Նյութ—թուղթ: Կազմ—կաշեպատ տախտակ դրոշմազարդ: Գրությունը—երկսյուն 21×12,5 բոլորագիր: Գրիչ—Յակոբ սարկաւագ: Ստացող—Ներսէս րաբունապետ: ժամանակ—ՌԺԸ (1569)—ՌԺԹ (1570): Տեղ—Բաղէշ: Հիշատակարան—$179^{ա-բ}$, $228^{բ}$, 348: Հիշատակագրություններ—$53^{բ}$, $229^{բ}$, 246, 247, 248:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1—$182^{բ}$ Ագաթանգեղոս:
$184^{ա}$—$193^{ա}$ Դաշանց թուղթ:
$194^{ա}$—$231^{բ}$ Յաղագս զարմից սրբոյն Գրիգորի և տեսիլ սրբոյն Ներսիսի:
$233^{ա}$—$250^{ա}$ Յառաջաբան տեսլեան և տեսիլ սրբոյն Սահակայ:
$251^{ա}$—$350^{բ}$ Եղիշէի «Պատմութիւն»: Վերջում թերթ է ընկած: Վերջանում է հետևյալ բառերով. «արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք»:
$348^{ա-բ}$ Հիշատակարանի երկրորդ կեսը. «...դարձեալ յիշեցէք...»: Առաջին կեսն ընկած է:

Վերնագիր. *«Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և հայոց սպարապետի և վկայի Քրիստոսի Յեղիշայէ սրբոյն Դաւթայ երիցու հայցեալ գրեաց»:*

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

179ա—բ «Փառք...որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ և մեղսամած մատանցս ծրել զպատմութիւն երիցս երանեալ և երջանիկ հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի սուրբ ուխտս խնդրակատար ի Բաղէշ քաղաքի ի թվ. ՌԺԸ: Ես Յակոբոս գծագրեցի ձեռամբ իմով, որ յետինս եմ ի շարս բանասիրաց անուամբ սարկաւագ կոչի...և զհօրեղբայրն զՆերսէս քաջ բարունապետն, որ ետ զսա գծագրել զգիրքս յիշատակ իւր և ծնողաց իւրոց...»:

348 Հիշատակարան նույն բովանդակությամբ, ինչ որ 179, 228բ: Ժամանակի մասին ասվում է. «...ի հայրապետութեան տէր Միքայէլին, ի թագաւորութեան աշխարհակալ արքային Սօլթան Սէլիմ խոնդքարին, ի յայսմ ամի գրեցաւ գիրքս, ի դառն և ի չար ժամանակիս զի յամէն դիմաց դառնութիւն և վիշտն պատեր է զհայոց տառապեալ ազգիս. զի յամէն տարի որիշ որիշ պատուհաս կուգայ ի վերայ հայոց ազգիս—սով, սուր, գերութիւն, մահ, շարժ և տապալումն, ժանկ, մարախ, թրթուր, ջարեակ, գալուկ, հեղեղ անթիւ և անհամար, որ ոչ կարեմ ընդ գրով արկանել»:

247բ—248ա Ինչպես և այլուր ստորին լուսանցքում—«Գիրքս յիշատակ է Կարապետ վարդապետին ի դուռն Վարագա սուրբ Նշանին»:

Այս ձեռագրի մասին Ագաթանգեղոսի կապակցությամբ տես Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, էջ ԺԳ—ԺԴ: Ձեռագիրն այստեղ կրում է № 1617 (Կարենյան ցուցակ 1615) համարը:

Յեղանակների կարգը

I	*251—256ա անվերնագիր.*	*«Զբանն...ընկալաւ զվճիռ մահու»:*
II	*256ա—275ա Երկրորդ. զիրացն պատահումն յիշխանէն արևելից.*	*«Որոց ոգիքն...երկայնութեամբ ճանապարհին»:*
III	*275ա—293ա Երրորդ. վասն միաբանութեան ուխտի սուրբ եկեղեցւոյ.*	*«Թէպէտ և ոչ իցեմք...բուռն հարեալ էր նորա»:*
IV	*293ա—297ա Չորրորդ. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց իւրոց.*	*«Մինչև ցայս վայր...զբաժակ դառնութեան մահու»:*
V	չիք	
VI	*297բ—309բ Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից.*	*«Մեծ է սէրն աստուծոյ... ոչ կարէին հաստատել վաղվաղակի»:*
VII	*309բ—319բ Եւթներորդ յեղանակ. կարգագրի դարձեալ առաքինութիւն Հայոց և չարագոյն եւս երևի անօրէնութիւն Վասակայ.*	*«Արդ դարձեալ յայնժամ...ցանկացող գործոց նորա»:*

VIII	*319բ—350բ Արտաքոյ եւթն յեղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայից։*	*Արդ ի վեշտասաներորդի... քաղաքամայրն բարեաց և այլն։*

14. *Ձ ձեռագիրը № 2559 (Գ. 615)*

Թերթեր—*310։* Մեծություն—*16,5×11,3։* Նյութ—*թուղթ։* Կազմ—*կլեոնկապատ կարտոն, մէջքը կաշի։* Գրություն—*միասյուն 12×7,5 բոլորագիր։* Գրիչ—*Մարգարէ,* Ստացող - *հեզահոգի տէր Յոհաննէս։* Ժամանակ—*ԺԵ—ԺԶ դար։* Հիշատակարան—*175բ ։ Բոլոր վերնագրերը կարմրագրով։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2ա—175բ Մովսես Խորենացի։
176—180 Բաց թերթեր։
181ա—303բ Եղիշէի վարդապետի զոր արարեալ է խնդրոյ Դաւթի Մամիկոնի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին։
303բ—304ա Ի պատմութենէ Թովմայի վարդապետի։
304ա—304բ Վասն արիւնահեղին Բարծումայի։
305—310 Բաց թերթեր։

Հիշատակարան

175բ «Ողջ լեր ծառայդ Աստուծոյ հեզահոգի տէր Յոհաննէս. յամենայն ժամ յիշեա և զիս զտառապեալ Մարգարէս, և յիշողացդ վարձս ի բարձրելոյն իջցէ ամէն»։

Այս ձեռագրի մասին Մովսես Խորենացու կապակցությամբ տես Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան. Տփղիս, 1913, էջ ժէ № 23 (հմմտ. Հակ. Թոփչյան, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վրդ-ի Դադյան, Վաղարշապատ, 1898, № 80, ուր և տեսնել մանրամասն նկարագիրը)։

Ցեղանակների կարգը

I	*181ա—187բ անվերնագիր.*	*«Բանն...զվճիռ մահու»։*
II	*187բ—211ա Յերկրորդ. զիրացն պատահումն յիշխանէն յԱրեւելից.*	*«Որոց ոգիքն...երկայնութեամբ ճանապարհին»։*
III	*211ա—232բ Երրորդ. վասն միաբանութեան սուրբ ուխտին եկեղեցւոյ.*	*Թէպէտ և ոչ իցեմք...բուռն հարեալ էր նորա»։*
IV	*232բ—237ա Չորրորդ յեղանակն. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և անօրէն ընկերաց իւրոց.*	*«Մինչ ցայս վայր...դառնութեան մահու»։*
V	չիք	
VI	*237ա—252ա Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ Թագաւորին Պարսից.*	*«Մեծ է սէրն աստուծոյ...ոչ կարէին հաւատալ»։*

VII	252ա—263ա Եւթներորդ յեղանակ. յորում նկարագրի դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարագոյն ևս երևի անօրէնութիւնն Վասակայ.	«Արդ դարձեալ յայնժամ...գործոց նորա»:
VIII	263բ—303բ Արտաքոյ եւթն յեղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայից.	«Արդ ի վեշտասաներորդի...զքաղաքամայրն բարեաց» և այլն:

15. Է ձեռագիրը № 1882 (1662)

Թերթեր—366 (262 չկա, 322-ից հետո մի թերթ առանց համարի, ընդհ. գումարը մնում է 366): Մեծություն—25×19: Նյութ—թուղթ: Կազմ—կաշեպատ տախտակ դրոշմազարդ: Գրություն—երկսյուն 18×13 և 18×13,5 (225-ից սկսած) բոլորագիր, նոտր: Գրիչ—Եսայի Կաֆայեցի: Ժամանակ—ՌԿԸ (1619): Հիշատակարան—357բ: Վերնագրերը կարմրագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1բ—12բ Գրիգորի եռամեծի և տիեզերալոյս վարդապետի հաւաքեալ քաղուածոյ մեկնութիւն սուրբ աւետարանին Մատթէոսի:

2 թերթ բաց:

15ա—222բ Ժողովումն մեկնութեան սուրբ աւետարանիս որ ըստ Մատթէոսի ի բանից նախաշար վարդապետաց եկեղեցւոյ կարգեալ և յօրինեալ դիւրահաս ընթերցողաց Ներսեսի Հայոց կաթողիկոսի և խընդրոյ նորուն եղբօր Գրիգորիսի առաջին վերադիտողի հայոց:

2 թերթ բաց:

225ա—298բ Մովսէս Խորենացի:

298բ—353ա Եղիշէ:

353ա–բ Ի պատմութենէ Թումայի վարդապետի: Վասն արիւնահեղին Բարձումայի: (Գրված է՝ Բարձումնայի):

3 թերթ բաց:

357ա—366բ Աստղաբաշխական գիտելիքներ և աղյուսակներ:

Վերնագիրը—«Եղիշէի վարդապետի զոր արարեալ էր ի խնդրոյ Դաւթի Մամիկոնի. և Վարդանայ և հայոց պատերազմին»:

Հիշատակարան

357բ «Եւ զիս յոգնամեղս և զյետնեալս ի կրօնաւորաց, զՅեսայի սուտանուն աբեղայս, որ է կաֆայեցի, զշինող արուեստիս յիշեցէք միով տէր ողորմայիւ, որ բազում աշխատութեամբ քննեցի և յարդարեցի»: Հետևում են աստղաբաշխական աղյուսակները:

Իսկ 1619 թիվը հիշվում է նույն էջի օրինակների մեջ լուսնագիրը, լրման գիրը և շաբաթու գիրը հայտնելու կապակցությամբ: Ուրեմն շուրջ այդ թվին պետք է գրված լինի ձեռագիրը:

Այս ձեռագրի մասին տես Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, էջ ժէ, № 22-ի տակ:

Այս ձեռագիրը սխալաշատ և անփութորեն գրված ձեռագիր է, ընթերցվածները մեծ մասամբ նման են նախորդ Զ ձեռագրին, կրկնում է *նույն իսկ նրա սխալները (տես էջ 138, 165—166, 185—186, 204 և այլն)։ Մեկը փորձել է սրա սխալներն ու բացթողումները հետագայում ուղղել, բայց համբերություն է ունեցել միայն առաջին երկու յեղանակները համեմատելու և սխալները նշելու։*

Զ և Է ձեռագրերի կապի փայլուն ապացույցը տես էջ 109—110 մեծ բացթողումը երկուսի մեջ էլ, մոտ 1 էջ։

Ցեղանակների կարգը

I	*$298^{բ}$—$301^{բ}$ անվերնագիր.*	*«Զբանն...զվճիռ մահու»։*
II	*$301^{բ}$—$311^{բ}$ Ցերկրորդ. զիրացն պատառումն յիշխանէն յարեւելից.*	*«Որոց ոգիքն...երկայնութեամբ ճանապարհին»։*
III	*$311^{բ}$—$321^{բ}$ Երրորդ. վասն միաբանութեան ուխտին եկեղեցոյ.*	*«Թէպէտև ոչ իցեմք...բուռն հարեալ էր նորա»։*
IV	*$321^{բ}$—$323^{բ}$ Չորրորդ յեղանակն. վասն երկրպագութեան* (!) *իշխանին Սիւնեաց և անօրէն ընկերաց իւրոց.*	*«Մինչ ցայս վայր...զբաժակն դառնութեան մահու»։*
V	չիք	
VI	*$323^{բ}$—$330^{բ}$ Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից.*	*«Մեծ է սէրն աստուծոյ...ոչ կարէին հաւատալ»։*
VII	*$330^{բ}$—$335^{բ}$ Եօթներորդ յեղանակ, յորում նկարագրի դարձեալ առաքինութիւն Հայոց և չարագոյն երեւի անօրէնութիւն Վասակայ.*	*«Արդ դարձեալ... ցանկացող գործոց նորա»։*
VIII	*$335^{բ}$—$353^{ա}$ Արտաքոյ յեւթն յեղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայից.*	*«Արդ ի վեշտասաներորդ... զքաղաքամայրն բարեաց»։*

16. *Ը ձեռագիրը № 1862 (1667)*

Թերթեր—*265։* Մեծություն—*20×14։* Նյութ—*թուղթ։* Կազմ—*կաշեպատ տախտակ դրոշմազարդ։* Գրություն—*միասյուն 14×8,5 (մինչև $171^{բ}$), 14×9 (172—184), 14×10 (185—265) բոլորագիր։* Գրիչ—*ըՌամանոս։* Ստացող—*Սահակ վարդապետ Ջուղայեցի։* Ժամանակ—*ՌՂ=1641։* Տեղ—*Նոր-Ջուղա։* Հիշատակարան և ճիշատակագրություններ—*$3^{ա}$, $66^{ա}$, $135^{ա}$, $145^{ա}$, $163^{բ}$ ։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

$4^{ա}$—$97^{ա}$ Մովսէս Խորենացի։
$97^{բ}$—$163^{բ}$ Եղիշէ։
$164^{ա}$—$184^{բ}$ Հատվածներ Փավստոսից։
$185^{բ}$—$261^{ա}$ Զանազան քարոզներ (Հովհան Որոտնեցու և այլն)։

Վերնագիրը *(97բ)—«Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի և վկայի Քրիստոսի յեղիշայէ սրբոյ Դաւթայ երիցուէ հայցեալ»:*

Հիշատակարաններ—

66ա «Ստացող պատմագրիս զքաջ և իմաստուն Սահակ վարդապետ ջուղայեցիս յիշեցէք, որ փափագանօք ետ գրել։ Եւ ես նուաստ և անպիտան սուտանուն ըՌամանոս գրիչս յիշեցէք. ի թուականիս հայոց ՌՂ ամին (=1641) գրեցաւ»:

163բ «Բարեխօսութեամբ սուրբ և մաքուր, քաջ և յաղթող զօրավարին և նահատակին Վարդանայ և ամենայն ինքնանուէր պատարագեալ բանակի նորին ՌԼ և Զ նահատակացն. մանաւանդ մաղթանօք սուրբ և ընտրեալ Ղևոնդեանց քահանայիցն, վարդապետացն և հայրապետացն ողորմեսցի տէր աստուած զտէր Սահակ կրօնաւոր քաջ և արին (!) շնորհալից կատարեալ, որ և աշակերտեալ և ուսեալ ի գիրս աստուածային և կարգ առեալ հրեշտակաց ի ձեռն բարունի և քաջ արին Խաչատուր վարդապետէ. տուացաւ գրել զայս գիրս վասն ընթերցման կատարելոց ի հաստանել բանից»:

Այս ձեռագրի մասին տես Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց հրատ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, էջ ԺԶ—Ժէ:

Ցեղանակների կարգը

I	*97բ —101բ անվերնագիր.*	*«Բանն...ընկալաւ վճիռ մահու»:*
II	*100բ —112բ Երկրորդ. գիրացն պատասխանւոյն յիշխանէն յարևելից.*	*«Որոց ոգիքն...երկայնութեամբ ճանապարհին»:*
III	*112բ —124ա Երրորդ. վասն միաբանութեան ուխտի սուրբ եկեղեցւոյ.*	*«Թէպէտ և ոչ իցիմք...բուռն նորա հարեալ էր»:*
IV	*124ա —127ա Չորրորդ. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց իւրոց.*	*«Մինչև ցայս վայր...զբաժակ դառնութեան մահու»:*
V	չիք	
VI	*127ա —135ա Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ Հայոց կալ պատերազմաւ թագաւորին Պարսից.*	*«Մեծ է սէրն աստուծոյ...ոչ կարէին հաւատալ վաղվաղակի»:*
VII	*135ա —141բ Եւթներորդ յեղանակ. կարգագրի դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարագոյն ևս երևի անօրէնութիւնն Վասակայ.*	*«Արդ դարձեալ յայնժամ...ցանկացող գործոց նորա»:*
VIII	*141բ —163բ Արտաքոյ եւթն յեղանակի ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայիցն.*	*«Արդ ի վեշտասաներորդի...զքաղաքամայրն բարեաց»:*

Հինգերորդ յեղանակի տարին լուսանցքում—«Եւ յայնմ տեղւոջ ընթերցողն մի ցնորի վասն հինգերորդ եղանակին, զի օրինակն ոչ կայր և մեզ այլ եղև ոչ սակաւ ցնորումն»։

17. Թ ձեռագիրը № 1404 (1381) Կ. 1345

Թերթեր—607 (չեն նշանակված 133, 353, 373, 457, 528 էջահամարները, կրկնված է 531, ուստի թերթերի իսկական թիվն է 603)։ Մեծությունը—18×12։ Նյութ—թուղթ։ Կազմ—կաշեպատ տախտակ դրոշմազարդ։ Գրությունը—երկսյուն 12,2×3,8 և միասյուն 13×7,5 նոտրագիր։ Գրիչ—Զաքարիա սարկավագ։ Ստացող—գրիչն ինքը։ Ժամանակ—ՌՃԺԳ (1664)։ Տեղ—Հովհաննավանք։ Հիշատակարան—468ա—470ա և 605ա—606բ։ Հիշատակագրություններ—298ա, 303ա, 529ա, 549ա։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1ա—465բ Մեկնութիւն Գործոց Առաքելոց Մատթէոս վարդապետի։
465բ—470ա Հիշատակարաններ։ (465բ—468ա Մատթէոս վրդ-ի հիշատակարանը)։
470բ—472բ Բաց թերթեր։
473ա—603ա Եղիշէ։
603ա—605ա Ի Պատմութենէ Թումայ վարդապետի և վասն արիւնահեղին Բարձումայի։
605ա—606բ Հիշատակարան։

Եղիշէի վերնագիրը—«Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի և վկայի Քրիստոսի յԵղիշայէ սրբոյ Դաւթայ երիցու հայցեալ գրեաց»։

Հիշատակարան—468ա—470ա Զաքարիա սարկավագի։ Մի ստանավորից հետո հայոց ազգի թշվառությունների մասին գալիս է բուն հիշատակարանը, որ հետևյալն է.

«...Գրեցաւ ձեռամբ չարահամբաւ Զաքարիա սարկաւագի և ձօնեցաւ ի դուռն Յոհաննու վանից սուրբ Կարապետին ՌՃԺԳ թվին։ Արդ գրեցաւ մեկնութիւն գործոցս ի թագաւորութեան տաճկաց սուլթան Մահմադին և ի թագաւորութեան Պարսից Շահաբասի երկրորդի, որդւոյ Շահսաֆուն, և իշխանութեան տանս Այրարատեան Արապ խանին որդւոյ Ամիրգունա խանին. և ի կաթուղիկոսութեան հայոց և ի պատրիարգութեան սուրբ Էջմիածնի արբազան և երիցս երանեալ մեծի հեղինակին Տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ և փոխանորդի նորուն և աթոռակալ և տեղապահ Սահակ վարդապետի...»։

Էջ 605ա—606բ «Փառք...որոյ ամենակարող զօրութեամբն եղև զրաւ և աւարտումն գրոցս որ կոչի Եղիշէ պատմագիր, յերկիրս Արարատեան ի գաւառս Կարբւոյ, յառն Արագածու՝ հանդէպ Արայու, ի հռչակաւոր և գերափառ աստուածարնակ քաւարանիս ի սուրբ մենաստանս ի Սիւղի վանաց, որ ստուգաբանեալ կոչի Յօհաննու վանք որ ի վերայ Քասաղ գետոյ, որ էր յարկ կայանի իշխանացն Ամատունեաց և աթոռ Մամիկոնէից... ի թուաբերութեան հայկազեան տոհմի Ռ-երորդի Ճ-երորդի Ի-երորդի սեպտեմբեր ամսոյ ի մուտն։ Ի թագաւորութեան Պարսից շահ Սուլեմանի և ամիրայութեան տանս Արարատեան Սաֆի ղանի երկրորդի, և ի կաթողի-

կոսութեան սուրբ աթոռոյն Էջմիածնի Տեառն Յակոբայ, և առաջնորդութեան սուրբ և հրաշակերտ մենաստանիս հեզահոգի և սրբազան մեծի րաբունապետին Յօհաննիսի Կարբեցւոյ։ Յորում ժամանակի նեղիմք և վշտանամք յայլասեռ և եղեռնագործ ազգացն պարսից. վասնզի այս Է և Ը ամ է զի հաշտութիւն է ի մէջ երկուց մեծամեծ թագաւորացն Պարսից և Տաճկաց. վասն այնորիկ բազմացեալ և յոռացեալ են ազգն Պարսից ուտելոյ և ըմպելւոյ պարարեալ, վասնորոյ միշտ կեղեքեն և կեղեքեն ողորմելի կեանս քրիստոնէից. նա և տեառնեն գլխանն իւրեանց զի ըստ կամաց նոցա շարժի. քանզի առաջին Սաֆի ղանն որ նստէր իշխան յԵրեւան յակրի ազգաւ թշնամացաւ ընդ մեծ հայրապետին Յակոբայ, որ կամէր գնալ Սպահան վասն գործոյ իւրոյ. իսկ իշխանն երկեաւ մի գուցէ գանգատեսցէ յինքեան, այլ դարձոյց զնա յԱստապատ գեղջէ և արար զնա զիպահոյ։ Եւ ժամ գտեալ նորա փախեաւ և գնացեալ գանգատեաց շահին. և այլ ևս բազումք գանգատեալ էին ի նմանէ։ Զայս ամենայն լուեալ շահն՝ առաքեաց և ըմբռնեաց զնա և կողոպտեաց զինչսն և զինքն շղթայիւք կալանս արար և այլ ոմն փոխանակ նորա առաքեաց իշխել Երևան, Սաֆի ղան անուն ազգաւ վիր։ Սա ամարթութիւն ցուցեալ և ոչ ոք երկնչէր ի սմանէ, այլ ամենեքեան ըստ իւրեանց կամացն կային։ Եւ բազմացան գողք և աւազակք և ոչ ոք կարէր գնալ ճանապարհ. զի կողոպտէին։ Եթէ ոք գանգատէր նմա, և նա ոչ առնէր դատաստան. և այսպէս կային ամենեքեան յերկիւղի և ի տատանման. բազմացոյց և հարկապահանջութիւնն ի վերայ ամենայն ումեք։ Եւ մեք վայ և աղաղակ կարդամք առն ունելով ողորմութեանն Աստուծոյ։

Եւ այս դառն ժամանակիս գրեցաւ սա ձեռամբ ամենաթշուառ և վատահամբաւ Զաքարիա սարկաւագի Քանաքեռցւոյ, որ Լ և Է ամ բնակեցայ ի տան սուրբ Կարապետիս և ոչ մի ժամ հաճոյ եղեալ Աստուծոյ, այլ զկամս իմ պաշտելով, և զսիրտ եղբարցն խռովելով։ Վա՜յ եղ(կ)ելոյս։ Սակայն ով ոք հանդիպիք սմա յիշեցէք...և միանգէն միաբանք թուով Խ։ Եւ զիս զփանաքի և ցնոտի Զաքէոս գծողս, զի Ծ ամաց էի որ գրեցի զսա։ Գ գիրք է սա. նախ՝ Գործք Առաքելոց գրեալ ի Խաչատուր վարդապետէ իմում ուսուցչէ։ Բ քաղուածու գործոց և Գ Եղիշէ պատմագիր յինէն գրեալ. վասնորոյ աղաչեմ անմեղադիր լինել վասն անվարժ լինելոյս, զի կարն իմ այս է...»։

Յեղանակների կարգը

I *473ա—479ա անվերնագիր.*	*«Զբանն... ընկալաւ զվճիռ մահու»։*
II *479ա—505ա Երկրորդ. զիրացն պատահումն յիշխանէն ռշևելից.*	*«Որոց ոգիքն...երկայնութեամբ ճանապարհին»։*
III *505ա—529ա Երրորդ. վասն միաբանութեան սուրբ ուխտին եկեղեցւոյ.*	*«Թէպէտև ոչ իցեմք... բուռն հարեալ էր նորա»։*
IV *529բ—533բ Չորրորդ յիշատակն. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և անօրէն ընկերաց նորա.*	*«Մինչև ցայս վայր... զբաժակն դառնութեան մահու»։*

V	չիք	
VI	533^{բ}—549^{ա} Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից.	«Մեծ է սէրն աստուծոյ...ոչ կարէին հաւատալ»:
VII	549^{ա}—561^{ա} Եօթներորդ յեղանակ, յորում նկարագրի դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարագոյն ևս երևի անօրէնութիւնն Վասակայ.	«Արդ դարձեալ...ցանկացող գործոց նորա»:
VIII	561^{ա}—603^{ա} Արտաքոյ եօթն յեղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայից.	«Արդ ի վեշտասաներորդի...քաղաքամայրն բարեաց»:

18. Ժ ձեռագիրը № 2639 (611)

Թերթեր—*563:* Մեծութիւն—*25×19:* Նյութ—*թուղթ:* Կազմ—*կաշեպատ տախտակ դրոշմազարդ:* Գրություն—*երկսյուն 19×6 բոլորագիր:* Գրիչ—*Պօղոս երեց, Գրիգոր երեց:* Ստացող—*Վարդան վարդապետ:* Ժամանակ—*ՌՃԻԱ—1672:* Տեղ—*Ամրդոլու վանք:* Հիշատակարան և հիշատակագրություններ—*4^{բ}, 33^{բ}, 81^{բ}, 111^{ա}, 142 (ստացողի), 210^{բ}, 244^{բ}, 270^{ա}, 540^{ա}, 563^{ա}:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

5^{ա}—135^{ա} *Ագաթանգեղոս:*
135^{ա}—142^{ա} *Դաշանց թուղթ:*
143^{ա}—244^{բ} *Մովսէս Խորենացի:*
245^{ա}—270^{ա} *Յաղագս զարմից սրբոյն Գրիգորի:*
270^{ա}—281^{բ} *Յառաջաբան տեսլեան սրբոյն Սահակայ Պարթևի և տեսիլ:*
281^{բ}—356^{ա} *Եղիշէ:*
364—476^{բ} *Ղազար Փարպեցի:*
477^{ա}—486^{բ} *Թուղթ Ղազարայ Փարպեցւոյ:*
488^{ա}—548^{ա} *Պատմութիւն Սեբէոսի անվերնագիր:*
549^{ա}—562^{ա} *Կորիւն, վարք Մաշթոցի:*

Եղիշեի վերնագիրը—*«Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի և վկայի Քրիստոսի յԵղիշայէ սրբոյ Դաւթայ երիցու հայցեալ գրեաց»:*

Հիշատակագրություններ և հիշատակարաններ

4^{բ} *Ստորին լուսանցքում—«Յիշեայ զիս, տէր իմ և ստեղծող, զՎանեցի Սահակ ծաղկող»:*

33^{բ} *«զՎարդան վարդապետն զԲաղիշեցին յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք իւրն և ծնողաց իւրոց՝ որ ետ գրել զսա յիշատակ իւրն և եդ ի դուռն սուրբ Յովհաննու: Եւ զիս զմեղաւոր Պօղոս սուտ երէցս, որ եմ գծող սորա, աղաչեմ յիշել ի տէր և դուք յիշողքդ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի»:*

111^{ա} *«Քրիստոս աստուած, բարեխօսութեամբ և աղօթիւք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ողորմեա ստացողի գրոցս Վարդան քաջ և սրբասէր վար-*

գաւթումն։ Եւ իւր ծնողացն՝ հօրն Եղիային և մօրն Ղարիպին և եղբարցն Խաչատուրին և Խօջխաբարին։ Եւս առաւել հոգևոր ծնողին իւրոյ Խաչատուր րաբունապետին և հոգևոր որդւոյ իւրոյ Աբրահամ վարդապետին և Սարգիս պատանեկին. զի յոյժ սիրով և փափաքանօք ետ գրել զգիրքս զայս յիշատակ իւրն և ծնողաց իւրոց...յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՎարդան քաջ և րաբունի վարդապետն՝ զԲաղիշեցին, որ իբրև զարեգակն փայլէ և լուսաւորէ զխաւարեալ և մեղաւոր մարդիկք՝ ասելով և խրատելով՝ և զամենեսեան դարձուցանէ ի չարեաց քաղցր բարբառովն և աստուածային քարոզութեամբն, զի միշտ և հանապազ ոչ դադարի ի քարոզելոյ և յուսուցանելոյ. քանզի զբազում ժամանակաց զխանգարեալ և զաւերեալ եկեղեցին նորոգեալ կանգնեաց և զոչ եղեալն շինեաց ի հիմանէ, և այլ բազում բարեգործութիւնս արար ի վերայ երկրի, զոր ոչ կարեմ մի ըստ միոջէ արկանել ի շարս քարտիսիս...ես Պօղոս երէցս, գծօղ սորա, աղաչեմ զձեզ զի յիշման արժան առնէք զիս»։

142ա Վարդան վրդ. Բաղիշեցու հիշատակարանը էջ 111ա-ի նման։ Իր ուսուցիչ Խաչատուր վրդ.-ի կողքին ավելացվում է միայն «Խաչատուր մեծ իմաստուն և փիլիսոփա վրդ-ի՝ Խաչատուր Բաղիշեցւոյն, որ յայսմ ամի որ զգիրս եառ ծրել, Ժ ամու յառաջ փոխեալ է առ Տէր»։ Իր աշակերտ Աբրահամ վրդ-ը կոչվում է Համթեցի, իսկ Սարգիսը՝ փոքր պատանեակ։ «Եւ միաբան եղբարց ամենեցուն, որ կան ի սուրբ ուխտս Յովաննու Մկրտչի...որ մականուամբ Ամրդօլու վանք ասի»... Գրիչ՝ Գուբըցի Պօղոս երէցը կոչվում է «հոգևոր որդի իմ»։ ...«Գրեցաւ ի Ռ և ի Ճ և ի ԻԱ թվին» (=1672)։

210ր «Արդ յերես անկեալ աղաչեմ... զի յիշման արժան առնէք զխորին փիլիսոփայն և զհոգիընկալ վարդապետն զՎարդան Բաղիշեցին, որ յայսմ ամի ի հալածանս է յանիծեալ ազգէն մահմեդականաց. յերկիրն Սուրբացւոց որ այժմ Հայու վերաձայնի. որ յայսմ հալածանաց միջի ետ գրել զգիրս յիշատակ իւրն և ծնողաց իւրոց։ Եւ ես Պօղոս սուտ երէցս, որ եմ գծող տառիս, աղաչեմ զձեզ, զի յիշման արժան առնէք զիս»։

486ր Ղազար Փարպեցու թղթի վերջում—«Այս, սուրբ վարդապետ, զոր ինչ առացեր, ճշմարիտ է, զի և այժմ նոյնպէս եղև և լինի հանապազ։ Ո՛վ սուրբ ընթերցուղք և եղբարք, գիրքս հին էր և աւրինակս Յունան վարդապետն կարդացեալ էր զաւրինակն և նորոգեալ և զպակասութիւն թղթոցն որ պակաս է ոչ էր գտեալ. և ես ոչ կարացի գտանել. աղաչեմ զամենեսեան, եթէ գտցի գիրքս այս ուրեք՝ գրեսջիք զպակասութիւն թղթոյս և դիք ի սմա. նախ՝ զակիզբն գրոցս և ապա յերկս տեղիս թուղթ մի անկեալ կայ։ ...Երկրորդեցի զգիրքս վասն յիշողութեան սրբոցն ի պարծանս մեր. և անսրբոցն յորդուոյ թշուառութեան և յամօթ յաւիտենից։ Քաջքն զօրացին ի Քրիստոս և տկարամիտքն կորանայցեն։ Եւ որք լսենն՝ աւաղեսցեն զազգիս մերոյ զառատպանս»։

Յեղանակների կարգը

I 281ր —284ր անվերնագիր.	«Զրանն...ընկալաւ զվճիռ մահու»։
II 284ր —297ր Երկրորդ. գիրացն պատահումն յիշխանէն արևելից.	«Որոց ոգիքն...երկայնութեամբ ճանապարհին»։

III	297^{բ}—310^{բ} Երրորդ. վասն միաբանութեան ուխտի սուրբ եկեղեցւոյ.	«Թէպէտև ոչ իցիմք...բուռն հարեալ էր նորա»:
IV	310^{բ}—313^{բ} Չորրորդ. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց իւրոց.	«Մինչև ցայս վայր...զբաժակ դառնութեան մահու»:
V	չիք (երկու բաց թերթ).	
VI	316^{ա}—324^{բ} Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ Թագաւորին Պարսից.	«Մեծ է սէրն Աստուծոյ...հաւատալ վաղվաղակի»:
VII	324^{բ}—331^{բ} Եւթներորդ յեղանակ, յորում կարգագրի դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարագոյն ևս երևի անօրէնութիւնն Վասակայ.	«Արդ դարձեալ...ցանկացող գործոց նորա»:
VIII	331^{բ}—356^{ա} Արտաքոյ եօթն յեղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայիցն Ղևոնդեանց.	«Արդ ի վեշտասաներորդի...զքաղաքամայրն բարեաց»:

Այս ձեռագրի ընդարձակ նկարագրությունն ու հիշատակարանները տես Ղազար Փարպեցի, Տփղիս 1904, էջ Ե—Զ. հմմտ. Մովսես Խորենացի, Տփղիս 1913, էջ ԺԵ—ԺԶ և Ագաթանգեղոս, Տփղիս 1909, էջ ԺԴ 8: Ձեռագրի հին համարը եղել է 2643:

19. Ի ձեռագրէ № 1889 (1686) Կ. 1644

Թերթեր—381 (293 համարը մեջ է ընկած, ուրեմն մնում է 380 թերթ)։ Մեծություն—24×18,6։ Նյութ—Թուղթ։ Կազմ—կաշեպատ տախտակ դրոշմազարդ։ Գրություն—երկսյուն 17,5×13; 18×13; 18,5×13 և 20,5×13,5 բոլորագիր։ Գրիչ—Մարկոս և Հայրապետ։ Ժամանակ—ՌՃԻԴ=1675։ Տեղ—Նոր Ջուղա։

Հիշատակարան և հիշատակագրություններ—41^{բ}, 68^{ա}, 114^{բ} և 266^{բ} ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2^{ա}—68^{ա} (68^{բ} դատարկ). Եղիշէ։ Վերջում՝ ի Պատմութենէ Թումայի և վասն արյունահեղին Բարձումայի։
69^{ա}—114^{բ} Ղևոնդ պատմագիր։
115^{ա}—125^{բ} Բաց էջեր։
126^{ա}—266^{բ} Բ. հատոր մեկնութեան սրբոյ աւետարանին Մարկոսի ասացեալ Բարսղի վարդապետի։ Միջում 195^{ա}—218^{բ} բաց էջեր։
267^{ա}—^{բ} բաց էջեր։
268^{ա}—369^{բ} Մովսէս Խորենացի։
370^{ա}—371^{բ} Դաշանց թղթի սկիզբը։
372^{ա}—381^{բ} Բաց էջեր։

Եղիշեի վերնագիրը—*«Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի և վկայի Քրիստոսի յԵղիշեայէ: Դաւթեայ երիցու հայցեալ գրեաց:*

Հիշատակագրություններ և հիշատակարան

41r «Զատուծեալս մեզօք զՄարկոս բանի սպասաւոր ծրօղ սուրբն սրտի մտօք յիշեսջիք ի տէր, ով ընթերցող եղբարք»:

68v «Կատարեցաւ բան պատմագրութեանց սրբոյ Եղիշայի հայոց վարդապետի. ձեռամբ ամենաթշուառ Մարկոսի՝ բանի սպասաւորի»:

114r «Գրեցաւ ձեռամբ ամենավրէպ և բէյնուայ Մարկոսի բանի սպասաւորի ի ՌՃԻԴ թուոջ» (=1124+551=1675):

266r Բարսեղ վրդ-ի Մարկոսի ավետարանի մեկնության վերջում.—

«Գրեցաւ և աւարտեցաւ սուրբ աստուածաշունչ գիրս ի Նուշ քաղաքն որ կոչի Իսպահան ի գեղն Ջուղայ ի դրունս Սուրբ Ստեփաննոսին ի հայրապետութիւն տէր Խաչատուր արի և քաջ վարդապետին: Եւ սուտանուն Հայրապետս գրիչս յիշեա, որ զանունս միայն ունիմ և գործս ոչ»:

Ուրեմն մինչև 126 էջը գրել է Մարկոս գրիչը, մնացածը Հայրապետը, որի գրածի մեջ 314—326 հետո նորոգված է և գրված տարբեր թղթի վրա՝ հետին գրչությամբ:

Յեղանակների կարգը

I	*2v—5r անվերնագիր.*	*«Զրանն...ընկալաւ զվճիռ մահու»:*
II	*5r—18r Երկրորդ. գիրացն պատահումն իշխանէն Արևելից.*	*«Որոց ոգիքն...երկայնութեամբ ճանապարհին»:*
III	*18r—31r Երրորդ. վասն միաբանութեան ուխտին եկեղեցւոյ.*	*«Թէպէտև ոչ իցիմք...բուռն հարեալ էր նորա»:*
IV	*31r—34v Չորրորդ յեղանակ. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և անօրէն ընկերաց իւրոց:*	*«Մինչ ցայս վայր... զբաժակն դառնութեան մահու»:*
V	չիք	
VI	*34v—41r Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից.*	*«Մեծ է սէրն աստուծոյ...ոչ կարէին հաւատալ»:*
VII	*41r—47v Եօթներորդ յեղանակ, յորում նկարագրի դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարագոյն ևս երևի անօրէնութիւնն Վասակայ.*	*«Արդ դարձեալ... ցանկացող գործոց նորա»:*
VIII	*47r—67r Արտաքոյ եօթներորդ յեղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայից.*	*«Արդ ի վեշտասաներորդի... զքաղաքամայրն բարեաց»:*

67r—68v Ի Պատմութենէ Թովմայի վարդապետի և վասն արինահեղին Բարծումայի:

Այս ձեռագրի մասին նմմտ. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս 1913, էջ ԺԴ—ԺԵ:

20. *Լ ձեռագիրը № 1482 (1611) Կ. 1619*

Թերթեր—*554 և 4 բաց թերթ:* Մեծությունը—*31×23:* Նյութ—*թուղթ:* Կազմ—*կաշեպատ տախտակ դրոշմազարդ:* Գրությունը—*երկսյուն 23,4×7,5 (=23,4×15) նոտրագիր:* Գրիչ—*Թումաս, Գրիգոր:* Ստացող—*Մինաս վարդապետ:* Ժամանակ—*1678:* Տեղ—*Ալիփուղար:* Հիշատակարան և ճիշատակագրություններ—*111^{ա}, 339^{բ}, 354^{բ}, 365^{ա}, 517^{բ} :*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մովսէս Խորենացի, Ստեփաննոս Ասողիկ, Արիստակէս Լաստիվերտցի, Եւսեբիոս Կեսարացի՝ Պատմութիւն եկեղեցւոյ, Ագաթանգեղոս և Դաշանց թուղթ, Յաղագս զարմից սրբոյն Գրիգորի և պատմութիւն Ներսիսի, Զենոբ Գլակ և Յովհան Մամիկոնյան, Փաւստոս Բիւզանդ, 332^{ա}—365^{ա} Եղիշէ, Ստեփաննոս Օրբելեան, Միքայէլ Ասորի, Վարդան, Աշխարհացոյց, Կողենի տեսիլը, Կիրակոս Գանձակեցի, Սոկրատ պատմագիր:

Եղիշեի վերնագիրը—*«Հիշատակարան և պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի և վկային Քրիստոսի Աստուծոյ»:*

Հիշատակարան և ճիշատակագրություններ—

111^{ա} «Ով հայր սուրբք, Նարին վարդապետն զքահանայքն որ մատնեաց ի ձեռն Ղափլան փաշին, ես փախստական և անճարակ տեղի նստեալ գրեցի զայս տետրս թվն էր ՌՃԻԷ փետրվարի ամսոյն ԺԶ օրն, ուրբաթ»: (=1678).

365^{ա} Եղիշեի վերջում.—«Գրեցաւ թվին ՌՃԻԷ-ին ի գեւղն Ալիփուղար, ձեռամբ Գրիգորի քարտուղարի»:

517^{բ} Կիրակոս Գանձակեցու վերջում—*«Ողորմած աստուած, ողորմեա ստացողի սուրբ գրոցս Մինաս վարդապետին և թող զյանցանս նորա, զկամայն և զակամայն, և ինձ նուաստ անարժան գրչիս»:*

Յեղանակների կարգը

I	*332^{ա}—333^{բ}*	*անվերնագիր*	*«Բանն…զվճիռ մահու»:*
II	*333^{ա}—339^{բ}*	*Երկրորդ. գիրացն պատահումն յիշխանէն արևելից.*	*«Որոց ոգիքն…երկայնութեամբ ճանապարհին»:*
III	*339^{բ}—346^{ա}*	*Երրորդ. վասն միաբանութեան սուրբ ուխտին եկեղեցւոյ.*	*«Թէպէտև ոչ իցեմք…բուռն հարեալ էր նորա»:*
IV	*346^{ա}—347^{ա}*	*Չորրորդ. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց նորա.*	*«Մինչև ցայս վայր…դառնութեան մահու»:*
V	չիք		
VI	*347^{ա}—351^{ա}*	*Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից.*	*«Մեծ է սէրն աստուծոյ…վաղվաղակի ոչ կարէին հաւատալ»:*

VII	351^{բ} —354^{բ} Ութերորդ յեղանակ. կարգադրի դարձեալ առաքինութիւն Հայոց և չարադոյն ևս երեւի անօրէնութիւնն Վասակայ.	«Արդ դարձեալ...ցանկացող գործոց նորա»:
VIII	354^{բ} —465^{ա} Արտաքոյ եւթն եղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայիցն.	«Արդ ի վեշտասաներորդի... զքաղաքամայրն բարեաց»:

Այս ձեռագրի մասին տես ընդարձակ Գ. Տէր-Մկրտչյան, „Zeitschrift für armenische Philologie“, 1904, էջ 269—270. Հմմտ. Ագաթանգեղոս, Տփղիս 1909, էջ ԺԵ, Մովսէս Խորենացի, Տփղիս 1913, էջ ԻԱ—ԻԲ և Պատմութիւն Տարօնոյ, հրատ. Աշ. Աբրահամյանի, Երևան 1941, էջ XVII—XVIII

21. Խ ձեռագիրը № 4351

Թերթեր—185+1 բաց թերթ: Մեծություն—20,5×15: Նյութ—թուղթ: Կազմ—կաշեպատ տախտակ դրոշմազարդ: Գրություն—միասյուն 14,5×9,5 նոտրագիր: Գրիչ—անհայտ: Ստացող—Յովհաննէս կաթողիկոս Աղուանից: Ժամանակ—ՌՃԼԸ (1689): Հիշատակարան—կազմի առաջին էջի վրա դրոշմված:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1^{ա} —105^{բ} Մովսէս Խորենացի:
105^{բ} —185^{բ} Եղիշէ:

Եղիշեի վերնագիրը—«Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի և վկայի Քրիստոսի յԵղիշեայէ սրբոյ Դաւթայ երիցուէ հայցեալ»:

Վերջանում է՝ «և յամենայն ատեանս յիշեցին զանուանս նոցա»... Թողել է մի քանի տող կիսատ:

Կազմի առաջին երեսին դրոշմված է—«Յիշատակ է պարոն Մնացականին և ծնողացն իւրոց Գրիգորին և մօրն Թագուհէ թուին ՌՃԼԸ»:

Պահպանակի երկրորդ երեսի վրա գրված է—«Ի վայելումն Տեառն Յովհաննէսի սրբազան կաթողիկոսի յամենայն Աղուանից, յոր ի սուրբ աթոռն Գանձաս[ար]ու:

Այս ձեռագրի մեջտեղը ծակծկված և փչացած է և շատ տեղ անընթեռնելի է, օրինակ՝ էջ 130—133, 140—149 և այլն: Ձեռագրի մասին տես նաև Մովսէս Խորենացի, Տփխիս 1913, էջ ԽԴ:

Յեղանակների կարգը

I	105^{բ} —109^{բ} անվերնագիր.	«Զբանն...զվճիռ մահու»:
II	109^{բ} —124^{ա} Երկրորդ. զիրացն պատահումն յիշխանէն յարեւելից.	«Որոց ոգիքն...երկայնութեամբ ճանապարհին»:
III	124^{ա} —138^{բ} Երրորդ. վասն միաբանութեան ուխտի սուրբ եկեղեցւոյ.	«Թէպէտև ոչ իցեմք...բուռն հարեալ էր նորա»:

IV	138r—142v Չորրորդ. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց իւրոց.	«Մինչև ցայս վայր...զբաժակ դառնութեան մահու»:
V	չիք	
VI	142v—151r Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ Հայոց կայ պատերազմաւ Թագաւորին Պարսից.	«Մեծ է սէրն աստուծոյ...ոչ կարէին հաւատալ վաղվաղակի»:
VII	151r—159r Եօթներորդ յեղանակ. կարգադրի դարձեալ առաքինութիւն Հայոց և չարագոյն եւս երևի անօրէնութիւնն Վասակայ.	«Արդ դարձեալ յայնժամ...ցանկացող գործոց նորա»:
VIII	159r—185r Արտաքոյ եօթն յեղանակի ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայից.	«Արդ ի վեշտասաներորդի... և յամենայն ատեանս յիշեցին զանուանս նոցա»:

22. Ծ ձեռագիրը № 4584

Թերթեր—386 (282 համարը մեջ է տված, 319-ի և 320-ի միջև մի թերթ համար չունի): Մեծություն—27,5×19,5: Նյութ—թուղթ: Կազմ—կաշեպատ տախտակ դրոշմազարդ: Գրություն—երկսյուն 20×6, 20×6,5 և 20×7 նոտրագիր մանր: Գրիչ—Աբրահամ: Ստացող—Ամթեցի մահտեսի Ղարադաշ և Թարգի խոջա Սահակ: Ժամանակ—1668 թ.: Հիշատակարան և հիշատակագրություններ—11v, 24v, 35r, 39r, 128v, 129v, 167v, 171v, 174v, 186v, 193v, 226v, 227v, 229r, 231r, 236v, 237v:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խորենացի, Ստեփաննոս Ասողիկ, Արիստակէս Լաստիվերտցի, Եւսեբիոսի Եկեղեցական պատմութիւն, Ագաթանգեղոս, Ներսէս Մեծի տեսիլ և այլն, Զենոբ Գլակ, Բիւզանդ Փաւստոս, 218v—238v Եղիշէ, Ստեփաննոս Օրբելեան, Հայունեաց խաչի պատմութիւն, Սոկրատ, Միքայէլ Ասորի, Վարդան, Կիրակոս Գանձակեցի, Թովմա Մեծոփեցի, Սմբատ Գունդստապլ, ի Պատմութենէ Տեառն Միխայէլի, Ղեւոնդ պատմագիր:

Եղիշեի վերնագիրը.—«Յիշատակարան և պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի և սուրբ վկային Քրիստոսի Աստուծոյ մերոյ»:

Հիշատակարաններ և հիշատակագրություններ

11v «Ո՛վ ընթերցող սուրբ հայրապետք և աստուածաբան վարդապետք, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զստացող գրոցս զմահդասի խոջա Աւետիսն և զանարժան Աբրահամ գրիչս տէր ողորմեսցի»:

24v «Յիշեսջիք զստացող գրոյս յԱմթեցի մզգեսի Ղարադաշն և զծնողս նորա և մեղաւթաւալ Աբրահամ գծողս»:

էջ 73r, Արիստակես Լաստիվերտցու վերջում.

«Գրեցաւ ձեռամբ Աբրահամ անարժանի ի Տիգրան[ակերտ] քաղաքի ի մատրան սուրբ Սարգսի ՌՃԺԷ [=1668] թուականին: Աղաչեմ յիշել զիս և զծնողքն իմ զտէր Յոհաննէսն և զԹամամն և դուք յիշեալ լիջիք...ամէն»:

էջ 361բ Թովմա Մեծոփեցու վերջում.

«...Մանաւանդ և ինձ տառապեալ անձինս Ղազար բանասիրի և սակաւ գծագրողի զպատմութիւն քաջ հռետորիս մերում Թովմայ մեծ վարժապետի: Զոր սկսեալ ի յարևելեան թագաւորացն ի չար գազանէն Թամուրայ մինչ ի կէս կոչման գրով եղոյց և հասոյց առ մեզ յետնեալք(ս). զոր ընթերցեալ տեսաք և փափաքմամբ նօտրեցաք ի ՌԽԶ [=1597] թուականիս»: Մեջ բերելով այս՝ Ասողիկի հրատարակիչ Ստ. Մալխասյանն ավելացնում է, մեր կարծիքով, իրավացիորեն. «Սակայն համարիմք, թէ այս յիշատակարան՝ հնագունի ձեռագրի իցէ, յորմէ գաղափարեալ է Պատմութիւն Մեծոփեցւոյն ի ձեռագրի աստ»:

129ա Հիշատակվում են ստացող Սահակը, հայրը՝ Թորոս, մայրը՝ Մահդասի Թանան, կողակիցը՝ Մաղթում, հոգևորդին՝ Գրիգոր սարկավագ, Աբրահամ գրիչը:

167ա Նույնը Թարգի Սահակի մասին, ավելանում է դուստրը՝ Սոփին: Նույնպիսի հիշատակագրություններ են վերևում հիշված բոլոր մնացած տեղերում:

Յեղանակների կարգը

I	218ա—219ա անվերնագիր.	«Բանն...ընկալաւ զվճիռ մահու»:
II	219ա—222բ Երկրորդ. զիրացն պատահումն յիշխանէն Արևելից.	«Որոց ազիքն...երկայնութեամբ ճանապարհին»:
III	222բ—226ա Երրորդ. վասն միաբանութեան սուրբ ուխտին եկեղեցւոյ.	«Թէպէտև ոչ իցեմք...բուռն հարեալ էր նորա»:
IV	226ա—227ա Չորրորդ. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց նորա.	«Մինչև ցայս վայր...զբաժակ դառնութեան մահու»:
V	չիք	
VI	227ա—229բ Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին Պարսից.	«Մեծ է սէրն աստուծոյ...վազվազակի ոչ կարէին հաւատալ»:
VII	229բ—231բ Եօթներորդ յեղանակ. կարգագրի դարձեալ առաքինութիւն Հայոց և չարագոյն ևս երևի անօրէնութիւնն Վասակայ չարին.	«Արդ դարձեալ...ցանկացող գործոց նորա»:
VIII	231բ—238ա Արտաքրայ եօթն յեղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայիցն.	«Արդ ի վեշտասաներորդի...զքաղաքամայրն բարեաց»:

Այս ձեռագիրը այն ձեռագիրն է (որ մի ժամանակ եղել է Կ. Եզյանի սեփականությունը), որից Ստեփան Մալխասյանի աշխատությամբ տպված է «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական» գրքի երկրորդ տպագրությունը, Պետերբուրգ, 1885 թ.:

Ձեռագրի մանրամասն նկարագրությունը տես Աստղիկ, էջ ԼԱ—ԼԹ, մանավանդ ԼԷ—ԼԸ: Հմմտ. Ագաթանգեղոս, Տփղիս 1909 թ., էջ ԻԵ, Մովսէս Խորենացի, Տփղիս 1913, էջ ԻԳ և Պատմութիւն Տարօնոյ, հրատ. Աշ. Աբրահամյանի, Երևան 1941, էջ XVII.

23. *Կ ձեռագիրը № 573 (524) Կ. 511.*

Գէորգեայ Եզընկացւոյ Բան հակաճառութեան և այլ գիրք ժողոված (մեծ մասամբ դավանաբանական գրվածքներ Բաղկեդոնի ժողովի և երկաբնակների դեմ)

Թերթեր—*483:* Մեծություն—*13×11,4:* Նյութ—*թուղթ:* Կազմ—*կաշեպատ տախտակ դրոշմազարդ:* Գրություն—*միասյուն 10×9 և 11×9,5 բոլորգիր:* Ժամանակ—*ԺԷ դար:*

$388^{բ}$—$469^{բ}$ Եղիշէ:

$469^{բ}$—$470^{ա}$ Եղիշեի որոշ բառերի բացատրություն:

$470^{ա}$—$483^{բ}$ Աստղաբաշխական և էֆեմերտիկան նյութեր:

Եղիշեի վերնագիրը—*«Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի և վկայի Քրիստոսի յԵղիշայէ սուրբ Դաւթի երիցու հարցեալ գրեաց»:*

Յեղանակների կարգը

I	*$388^{բ}$—$392^{բ}$ անվերնագիր.*	*«Բանն...ընկալաւ զվճիռ մահու»:*
II	*$392^{բ}$—$408^{ա}$ Երկրորդ. զիրացն պատահումն յիշխանէն Արեւելից.*	*«Որոց ոգիքն...երկայնութեամբ ճանապարհին»:*
III	*$408^{ա}$—$422^{ա}$ Երրորդ. վասն միաբանութեան սուրբ ուխտին եկեղեցւոյ.*	*«Թէպէտև ոչ իցեմք...բուռն նորա հարեալ էր»:*
IV	*$422^{ա}$—$425^{բ}$ Չորրորդ. երկպառակութիւն իշխանին Սիւնեաց և ընկերաց նորա.*	*«Մինչև ցայս վայր...զբաժակ դառնութեան մահու»:*
V	չիք	
VI	*$425^{բ}$—$435^{բ}$ Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ Թագաւորին Պարսից.*	*«Մեծ է սէրն աստուծոյ...ոչ կարէին հաւատալ»:*
VII	*$436^{ա}$—$443^{բ}$ Յեւթներորդ յեղանակ. կարգագրի դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարագոյն ևս երևի անօրէնութիւնն Վասակայ.*	*«Արդ դարձեալ...ցանկացող գործոց նորա»:*
VIII	*$444^{ա}$—$469^{բ}$ Արտաքոյ է յեղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմի և չարչարանաց սուրբ քահանայիցն.*	*«Արդ ի վեշտասաներորդի...զքաղաքամայրն բարեաց»:*

24. *Հ ձեռագիրը № 1458 (1660) Կ. 1618*

Թերթեր—*349 (վերջանում է 346-ով. մնացածը բաց թերթեր)*: Մեծություն—*19×14*: Նյութ—*թուղթ*: Կազմ—*կաշեպատ տախտակ դրոշմազարդ*: Գրություն—*միասյուն 13,5×9 նոտրագիր*: Գրիչ և ստացող—*Հովհաննես եպիսկոպոս Ղազվինցի*: Ժամանակ—*1705*: Տեղ—*Էջմիածին*: Հիշատակարան—*$193^{ա}$, $228^{բ}$, $346^{ա}$, նաև $1^{բ}$:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ագաթանգեղոս, Դաշանց թուղթ, Յաղագս զարմից Սուրբ Լուսաւորչին, տեսիլ Ս. Հայրապետին Ներսիսի, տեսիլ Ս. Սահակայ, $246^{ա}$—$345^{բ}$ Պատմութիւն Եղիշէի: Եղիշեի վերնագիրը— *«Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի և վկայի Քրիստոսի յԵղիշայէ սրբոյ Դաւթեայ երիցու հարցեալ գրեաց»:*

Հիշատակարաններ և հիշատակագրություններ—

$346^{ա}$—^{բ} «Փառք...որ զօրացոյց զներգևեալ մարմինս իմ հասանել ի զրաւ մատենիս: Բայց գրեցաւ ի սուրբ և ի հռչակաւոր վեհարան մեծի երկնահանգէտ աթոռոյս Էջմիածնի և աւարտեցաւ ի թուին ՌՃԾԴ և սեպտեմբերի հինգ ձեռամբ յոգնամեղ և եղկելի և ամենաթշուառ Յոհաննէս վրդ-ի Ղազվինցւոյ»:...Խնդրում է հիշել «զտէր Թորոս պարոն տէրն»՝ իր հոգևոր հորը, որ շատ նեղություն ու չարչարանք է կրել, մինչև որ նրան իր չափին է հասցրել: Մանաւանդ ծնողներին՝ տէր Ղուկաս և Մարգարիտ, եղբայրներին՝ տէր Սարգիս, տէր Մարկոս, Մատթէոս, Գրիգոր, Յովսէփ, քույրերին՝ Հռիփսիմէ, Գայիանէ, Մարիամ...«Եղև կատարումն սուրբ գրիս ի հայրապետութեան տեառն զտէր Նահապետ կաթողիկոսին, որ յայսմ ամի հանգեաւ ի Քրիստոս... յիշման արժանի արարէք զյամենից նուաստ և յետնեալ զտէր Յովհաննէս վարդապետս Ղազվինցի, գծող և ստացող սուրբ գրքիս»:

$345^{բ}$ «Եղև կատարումն սուրբ պատմագրիս ՌՃԾԴ թվին—սեպտեմբերի Ե-ումն վերջ եղև»:

Յեղանակների կարգը

I	*$246^{ա}$—$251^{ա}$ անվերնագիր.*	*«Զրանն...ընկալաւ զվճիռ մահու»:*
II	*$251^{ա}$—$269^{բ}$ Ձերկրորդ (!). իրացն պատասխանումն իշխանէն յԱրևելից.*	*«Որոց ոգիքն...երկայնութեամբ ճանապարհին»:*
III	*$270^{ա}$—$288^{ա}$ Երկրորդ(!). վասն միաբանութեան ուխտի սուրբ եկեղեցւոյ.*	*«Թէպէտև ոչ իցիմք...բուռն նորա հարեալ էր»:*
IV	*$288^{ա}$—$292^{ա}$ Չորրորդ. վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց իւրոց.*	*«Մինչև ցայս վայր...զբաժակ դառնութեան մահու»:*
V	չիք	
VI	*$292^{բ}$—$305^{ա}$ Վեցերորդ. կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմին(!) թագաւորին Պարսից.*	*«Մեծ է սէրն աստուծոյ...ոչ կարէին հաւատալ վաղվաղակի»:*

VII	*305ա—314բ Եւթներորդ յեղանակ. կարգադրի դարձեալ տաւքինութիւն Հայոց և չարագոյն ևս երկի անօրէնութիւն Վասակայ.*	*«Դարձեալ յայնժամ...մի լիցի ցանկացող գործոց նորա»:*
VIII	*314բ—345բ Արտաքոյ եօթն եղանակին ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայիցն.*	*«Արդ ի մետասաներորդի...քաղաքամայրն բարեաց» և այլն:*

Այս ձեռագրի մասին տես նաև Ագաթանգեղոս, Տփղիս 1909, էջ ժէ:

25. *Զ ձեռագիրը № 1737 (1772)*

Թերթեր—*198:* Մեծությունը—*20×15:* Նյութ—*թուղթ:* Կազմ—*կաշեպատ տախտակ դրոշմազարդ:* Գրությունը—*միասյուն 14×9 նոտրագիր:* Գրիչ—*Ասար Սեբաստացի:* Ժամանակ—*անհայտ:* Հիշատակարան—*170բ:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատմութիւն վարուց Յովհաննու աւետարանչին:
Թագաւորք Պարսից:
Նախնիք հրէից, թագաւորք Յուդայ:
Կայսերք Հռոմոց, Հայոց, Բագրատունեաց:
Վկայութիւնք մարգարէից յաղագս Քրիստոսի:
Գրեգրի եպիսկոպոսի յաղագս կաղանդաց և այլն:
Մեկնութիւն տօմարի Անդրէասի:
Պատմութիւն սրբոյ առաքելոյն Թովմայի:
Տաղք, մեղեդիք Նաղաշ, յԱռաքել վարդապետէ և յայլոց:
Աստեղաբաշխական գիտելիք:
Ի դուրս գալն Թաթարաց (խաների թվականները):

183ա «Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի Հայոց սպարապետի և վկայի Քրիստոսի յեղիշայէ սրբոյ Դաւթի երիցու հարցեալ գրեալ»:
Սկսվում է՝ «Բանն վասն որոյ պատուիրեցեր...»և վերջանում է 184բ «...և արգել զնա ի բազում բարիութենէն»: Էջն էլ գրված է կիսատ, ուրեմն ընդամենը 3½ էջ:

185ա Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ. Կիւրղի. Օգոստինոսի, Ամբրոսիոսի և այլն:

189ա—193ա «Հասարակ վարդապետաց ասացեալ, որոց անուանքն ոչ գտաք»:

26. *Դ ձեռագիր № 5920 (1321) (576)*

Թերթեր—*131:* Մեծությունը—*18×12.5:* Նյութ—*թուղթ:* Անկազմ: Գրությունը—*միասյուն 15×8,5 նոտրագիր:* Ժամանակ—*ԺԹ դար:*

«Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին Դաւթի երիցու Մամիկոնի հայցեալ»:

Աշխարհաբար—

«Այն խոսք, զոր նոր պատվիրեցիր, ըրի, ով քաջ իշխան, Հայոց պատերազմին համար հրամայեցիր, որուն մեջը քիչերին ավելի շատերը առաքինի եղան...»:

Բերված է Կառուց անապատից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

$1^{\text{ա}}$—$126^{\text{բ}}$ Եղիշեի «Պատմությունը»:

$127^{\text{ա}}$—$131^{\text{ա}}$ Ճառ միանձանց. «Մարդիկներ, որ ի մարմին են և կամքով ինքզինքնին աստուածապաշտութեան տուին, ի սկզբանէ անտի իրենց տղայութենէն ի վեր»...«Որուն մէջ մենք ալ այս տկար գրչութեամբ աշխատեցանք այս միաբանութեան սուրբ ուխտով մէկտեղ վայելենք, մեր տէր Հիսուս Քրիստոսի շնորհօքն, որում փառք յաւիտեանս ամէն»:

Սրանք են Եղիշեի Վարդանանց պատմության ՀՍՍՌ Պետական ձեռագրատանը (Մատենադարանում) գտնվող բոլոր ձեռագրերը:

27. Այս ձեռագրերը, բացի վերջինից, որ աշխարհաբար է, բաժանվում են ըստ իրենց ընթերցվածների հետևյալ հիմնական խմբերին.

ա) ԱԶԷԹԻ ձեռագրերը կազմում են մեկ խումբ: Բացի ընթերցվածների նույնությունից, այդ բանն ապացուցվում է նրանով, որ այդ բոլոր ձեռագրերն էլ համապատասխան չունեն էջ 124 տող 21-ից մինչև էջ 125 տող 5 հատվածը «և զանխառն անդր—զանկեալսն ի սրայ»: Համմ. նաև էջ 109 տող 5-ից մինչև էջ 110 տող 7 (գրքում սխալմամբ տպված է էջ 108. 109):

Այս խմբի Թ և Ի ձեռագրերը շատ նման են միմյանց, բայց Ի ձեռագիրը, որ 11 տարի հետո է գրված Թ ձեռագրից, նրանից չէ արտագրված, որովհետև Թ-ի մեջ բացակայող տողերը կան սրա մեջ, օրինակ՝ էջ 58 տող 6 «յամենայն կողմանց անդր ժողովեցան», ինչպես նաև էջ 73 տող 22 «և անարգօք զմեծամեծ իրս կատարել»: Պետք է ենթադրել, ուրեմն, որ այդ երկու ձեռագրերի աղբյուրը մեկ է:

բ) Երկրորդ խումբը կազմում են ԳԵԸԺԽԿՀ ձեռագրերը, որոնք համարյա ամենուրեք նույն կամ նման ընթերցվածներ են տալիս: Այս խմբի Գ և Ե ձեռագրերը, չնայելով նրանց իրար շատ մոտ լինելուն, միմյանցից չեն արտագրված: Գ-ն (գրված 1310 թվականին Վանում) պետք է այդ դեպքում լիներ Ե-ի (գրված 1569 թվականին Բաղեշում) աղբյուրը, սակայն Ե-ն անշուշտ Գ-ից չի արտագրված, որովհետև Ե-ի մեջ կան արտահայտություններ, որ չունի Գ-ն, օրինակ՝ էջ 44, տող 3—4 Գ-ն չունի «տասնել զարմանային չարաչարքն» բառերը, իսկ Ե-ն ունի այդ բառերը: Այստեղ էլ պետք է ենթադրել, որ այդ երկու ձեռագրերի սկզբնօրինակը մեկ է:

գ) Երրորդ խումբը կազմում են ԴԼԾ ձեռագրերը: Այդ ձեռագրերից Դ-ն համարվում է գրված XIV դարում, Լ-ն գրված է 1678 թվականին, իսկ Ծ-ն 1668 թվականին: Ծ-ի գրության թվականը պարզվեց հետագայում, աշխատանքի երկար էտապ անցնելուց հետո. սկզբում անորոշ կերպով նրա գրության ժամանակը նշանակված էր XVII դար: Պարզ չէ նաև այս երկու ձեռագրերի փոխհարաբերությունը: Բայց որովհետև մենք շատ վաղ նկատեցինք այդ երկու ձեռագրերի բացարձակ նույնությունը, որոշ էջերից հետո սկսեցինք նշանակել նրանցից միայն մեկի՝ Լ-ի այլընթերցվածները և Ծ-ի սակավաթիվ տարբերությունները, ուստի հետագայում, Ծ-ի գրության տարեթիվը հաստատորեն որոշելուց հետո, այլևս չփոխեցինք ընթերցվածների աղբյուրը նշող տառերը՝ թյուրիմացություններից խուսափելու և սխալներ թույլ չտալու համար: Անհրաժեշտ է, ուրեմն, որտեղ միայն Լ է նշանակված, այնտեղ ավելացնել նաև Ծ տառը:

Շատ հավանական է, սակայն, որ այդ ձեռագրերն ևս միմյանցից չլինեն արտագրված, այլ մի ընդհանուր աղբյուրից բխած լինեն, որովհետև Լ-ն ունի այնպիսի նախադասություններ, որ Ծ-ն չունի, և ընդհակառակը. օրինակ՝ էջ 25 տող 9—10 Լ-ն ունի, իսկ Ծ-ն չունի «որպէս զմարդ Որմիզդ արար և զախտս և զհիւանդութիւնս և զմահ Արհմն արար» բառերը։ Իսկ էջ 202 տող 11 Ծ-ն ունի «անկան կործանեցան ապարանք նոցա», այն ինչ Լ-ն չունի այդ բառերը։

դ) Առանձին տեղ է գրավում բոլոր ձեռագրերի մեջ Բ ձեռագիրը (գրված 1207 թվականին և նորոգված 1687 թվականին հայտնի Զաքարիա սարկավագ պատմագրի ձեռքով)։ Այստեղ կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ այս ձեռագիրը ութերորդ յեղանակ չի ճանաչել, ինչպես նշեցինք իր տեղում, ձեռագրի նկարագրության ժամանակ. Սակայն պետք է նշել, որ այս ձեռագիրը հաճախ միանում է երկրորդ խմբի ձեռագրերի հետ, երբեմն էլ երրորդ խմբի հետ։

ե) Մնացած երկու ձեռագրերի (Ջ և Ղ) մասին չենք խոսում, որովհետև նրանք զուրկ են մեր նպատակի համար կարևոր նշանակությունից. Նրանցից մեկը՝ Ջ-ն ունի Եղիշեից միայն $3^1/_2$ էջ, իսկ մյուսը՝ Ղ-ն աշխարհաբար է։

28. Մի քանի խոսք էլ ասենք Եղիշեի այն ձեռագրերի մասին, որոնք հիշատակվում են զանազան աղբյուրներում, բայց գտնվում են Սովետական Հայաստանի սահմաններից դուրս։

Կարևոր և լավագույն ձեռագրերից մեկը գտնվում է Վենետիկի Մխիթարյանների գրադարանում. Դա մի ժողովածու է, որ պարունակում է Մովսես Խորենացու և Եղիշեի Պատմությունները և կրում է № Ե. Գ. 200 համարը։ Ձեռագիրը կաշեկազմ է, զարդադրոշմով, մեկ սյունի վրա գրված, նոր բոլորագիր, մեծությունը $18 \times 12^1/_2$, վերնագրերը կարմիր թանաքով։ Հիշատակարանը Խորենացու Պատմության վերջում, էջ 384։ Գրության թվականը 1660, գրիչը Ալեքսիան, որի եղբայր Կոզմասը նույնպես գրիչ է եղել։ Ընդամենը 334 թերթ կամ 668 էջ։ Մովսես Խորենացի էջ 1—402, որից հետո Եղիշեի Պատմությունը էջ 403-ից մինչև վերջը։ Պահպանված է բավարար։[1] Այս ձեռագրի ընթերցվածները, որոնք ըստ մեծի մասին հարում են մեր առաջին խմբին (ԱԶԷԹԻ), նշանակված են V տառով։

---

[1] Պարտք ենք համարում այստեղ մեր շնորհակալությունը հայտնել ընկ. Գ. Աբովին, որ Վենետիկից մեր այս աշխատության համար 1946 թվականին բերեց մի քանի կարևոր նյութեր, որոնց մեջ նաև հիշյալ ձեռագրի լուսանկար նմանահանությունը, դժբախտաբար առանց առաջին 39—40 էջերի, որոնց միայն թռուցիկ համեմատությունն է կատարել ինքը։ Չեն նկարահանված նաև վերջին 4 էջը, սակայն մեր նպատակի համար այդ նշանակություն չունի, քանի որ 332 (664) էջից արդեն սկսվում են «Ի Պատմութենէ Թովմայի վարդապետի» հատվածները։

Ընկ. Գ. Աբովի բերած մյուս նյութերից առանձնապես կարևոր է Վենետիկի լրիվ ճառընտիրներից մեկի լուսանկար նմանահանությունը, որը պարունակում է Եղիշեի Պատմության հինգերորդ յեղանակից մինչև ութերորդ յեղանակի վերջը (էջ 182 «ոչ խառն ի խուռն ի մի վայր ժողովելով, այլ» բառերը), ՊԾԸ էջից մինչև ՋԵ էջը, ընդամենը 48 երկսյուն էջ։ Դժբախտաբար, այստեղ էլ չի նկարահանված վերջին էջը։ Հիշյալ ճառընտիրը գրված է 1224 թվականին Թադեոս անուն գրչի կողմից։ Ձեռագիրը Տրապիզոնից ուղարկել է Խոտորջուրցի տեր Հակոբը, Մխիթարյան վանքը բերել է Վրթանես Ասկերյանը։

Այս ճառընտրի ընթերցվածները, որ մեր աշխատության մեջ նշանակված է հունարեն α տառով, տպագրությամբ լույս են տեսել 1911 թվականին Վենետիկում հանդեսյալ

Ուշադրավ է նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության գրադարանի № 1530 կոչված ձեռագիրը։ Այս ձեռագիրը, ինչպես երևում է ընկ. Գ. Աբովի կատարած մոտ 20 էջի համեմատությունից, իր ընթերցվածներով նույնանում է V ձեռագրի հետ։ Ձեռագիրն ունի 478 էջ, նախ՝ Մովսես Խորենացու Պատմությունը, ապա 277—472 Եղիշեի Պատմությունը, վերջում հիշատակարաններ։ Ձեռագրի էջերի մեծությունն է $24^{1}/_{2}\times 18^{1}/_{2}$, խորությունը՝ 3,2, կաշեկազմ, դրոշմված, նյութը՝ թուղթ, գրչությունը՝ երկսյուն, կարմրաններկով, լուսանցազարդերով։ Պահպանված է լավ վիճակում, գրված է 1664 թվականին Շոռոթում։ Անշուշտ այս ձեռագրի հիշատակարանի նմանատպությունն է, որ գտնում ենք Հ. Ղ. Ալիշանի Սիսականի մեջ (Վենետիկ 1893), էջ 354, և որը հետևյալն է.

Աւարտ եղև յայսմ տարի՝
ի թվականիս Հայկայ սեռի
երկքառակի ւերկհարիւ-
րի երկյոբելեան և երկհն-
գեակ ի նոյն յարի և երրեակ
թիւ այլ յարարարդի։ Ամ-
սեանն յունաց ապրիէլի
եսեակ հնգեակ և քառակի
և թիւ մի այլ աւելի, երկիրս
Երընջակ առի ի վիճակն սուրբ
Կարապետի. առաջնորդութեան տեառն
յՕսայի հեզահոգի վարդապետի
և կաթողիկոսութեան հայոց սուրբ էջ-
միածնի՝ Յակոբայ բարու-

վերնագրով. «Եղիշեի չորս յեղանակները հնագույն գրչագրի մը մէջ», աշխատասիրեց Հ. Ղևոնդ Տայեան Մխիթարեան։

Բերում ենք ընկ. Աբովից մեր ստացած մյուս նյութերի վերնագրերը.

ա) Ճառընտրի մի հատված, որ պարունակում է Եղիշեի 100—121 էջերը։ Գրության թվականն անհայտ է, գրիչն է Կյուրեղ։ Սրա ընթերցվածները մեզ մոտ նշանակված են հունարեն β տառով։

բ) Ճառընտրի մի հատված, որ պարունակում է Եղիշեի 98—121 էջերը. սրա ընթերցվածները մեզ մոտ նշանակված են հունարեն γ տառով։

գ) Համեմատություն Փարիզի ազգային մատենադարանի ձեռագրի մը— ձեռագրի թիվը և գրության թվականը անհայտ—կատարել է 1853 թվականին «Մխիթարյան մը (անունը անհայտ)»։ Մեզ համար արտագրել է Անտոն Ճիվանյան։

դ) Համեմատութիւն ի հին օրինակէ Եղիշէի, որ ի ՌՃԶ թուականին Հայոց գրեալ էր յԱրարատեան գաւառի։ Մեզ համար արտագրել է Անդրեաս Ֆոկոլյան։ Հավանորեն սա մեր ձեռագիրն է (տես վերևում)։

ե) Համեմատություն Աստապատում ՌՃԽԶ թվին գրված ձեռագրի հետ Կարապետյանի ձեռքով։ Մեզ համար արտագրել է Գրիգոր Սարգսյան։

զ) Եղիշեի երկու պատառիկ։

Մխիթարյան միաբանության վերևում հիշված երեք անդամներին հայտնում ենք մեր շնորհակալությունը նրանց կատարած աշխատանքի համար։ Այդ համեմատություններից մենք չկարողացանք օգտվել, որովհետև մեր համեմատությունը ցույց տվեց, որ դրանք ոչ մի աչքի ընկնող այլընթերցված չեն տալիս, որ մեզ հայտնի չլինեին մեր ձեռքին եղած որևէ ձեռագրից։ Նույնը պետք է ասենք նաև պատառիկների մասին, որոնք նույնպես արտատպված են Ղևոնդ Տայեանի վերևում հիշված գրքում։

> նապետի. գծագրեցաւ տառս ցանկալի՝ ասացեալ Եղիշէի թարգմանողի, ի գեօղն Շօռօթ վերակոչի ի դուռն սուրբ աստուածածնի ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչին։

Ալիշանի կարծիքով (նույն էջ)՝ «Կուսան ծաղկեալ յԱնապատիս՝ Շուշան՝ թվի ընդօրինակող գրոց պատմչաց մերոց Խորենացւոյ, Եղիշէի և այլն»։ Տես նաև Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան, Տփղիս 1913, էջ ԻԵ։

Եղիշեի երկու ձեռագիր էլ հիշատակում և նկարագրում է Բարգեն Կյուլեսերյանը իր «Եղիշե, քննական ուսումնասիրություն» աշխատության մեջ, Վիեննա 1909 (Ազգային մատենադարան, ԾԷ)։

Այդ ձեռագրերից մեկը «Բաղեշի Ամրտոլ վանքին ձեռագիր Եղիշեն է, գրված ՇՀԹ (1130)-ին (տես նույն հեղինակի «Ծովք», էջ 49—50)... Ձեռագիրը մկնակեր է, սկզբեն և վերջեն, ինչպես նաև մեջեն թուղթեր ինկած են, սկիզբեն մինչ երկրորդ յեղանակին առաջին մասերը բոլորովին կպակսին։ Մնացած կրծված երեսը կսկսի «և զգոյն [պատուէր հրամանի առ ամենես]եան ար[կանէր] բաներով։ Ձեռագիրը շատ կրծված է—հազիվ ամբողջական երեսներու կհանդիպինք երրորդ յեղանակին մեջ՝ Թէոդոս կայսեր ուղղված հրովարտակին քովերը։

Արտաշատի ժողովի խորագիրն է՝ «Ժողովեցան ի տեղւոջ... միաբանութեամբ նախար...նամակին պարունից» (կետադրված տեղերը կրծված են)։

Յեղանակների վերնագրերից մնացել են

Երրորդ վասն միաբանութեան սուրբ եկեղեցեացն.

Չորրորդ վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց և ընկերաց իւրոց.

Հինգերորդ կրկին անգամ ընդդէմ կալ Հայոց պատերազմաւ թագաւորին.

Վեցերորդ չիք։ Ուշագրավ է, որ այս ձեռագրում ուրիշ օրինակների վեցերորդի խորագիրը արված է հինգերորդին մեր Պետական մատենադարանի Դ ձեռագրի նման։

Եւթներորդ յեղանակն, յորում կարգադրի դարձեալ առաքինութիւնն Հայոց և չարագոյն եւս երեւի անօրէնութիւնն Վասակայ.

Արտաքոյ եւթն յեղանակին ութերորդ—դարձեալ վասն Նորին պատերազմին և չարչարանաց սուրբ քահանայիցն և այլն մինչև վերջը։ «Իսկ կանայք երանելի առաքինեացն» հատվածի վերջում՝ «Բայց և ինձ յայս ճառ պիտոյ է գալ, եթէ տէր ինքնին կամեսցի»։ (Տես վերոհիշյալ գիրքը, էջ ԺԹ—ԻԱ)։

Կյուլեսերյանի նկարագրած երկրորդ ձեռագիրը (Կյուլեսերյան, Եղիշե, էջ 45—48) Դպրեվանքի (Արմաշի) ձեռագիրն է, որը գրված է 1671 թվականին Երնջակի Շոռոթ գյուղաքաղաքում։ Ձեռագիրը պարունակում է Մովսես Խորենացու և Եղիշեի պատմությունները, ընդամենը 242 թերթ, 28×15 մեծությամբ։ Կազմը՝ հին կաշեկազմ փայտյա. հանգամանք՝ լավ. գիրը՝ միջակ բոլորագիր։ Եղիշեն գրավում է 135 թերթ (=270 էջ), որին հետևում են 3 թերթ Թովմայի հատվածներն ու գրքի հիշատակարանը։ Սկիզբը՝ «Եղիշէի վարդապետի, զոր արարեալ է ի խնդրոյ Դաւթի Մամիկոնի վասն Վարդանայ և Հայոց պատերազմի: Օգնեա Հոգի սուրբ»: Հինգերորդ յեղանակ չունի, անմիջապես անցնում է վեցերորդին, ավելի ճիշտ՝ հինգերորդ և վեցերորդ յեղանակներն այստեղ կազմում են մի ամբողջություն վեցերորդ յեղանակ անունով, ինչպես Եղիշեի ձեռագրերի ճնշող մեծամասնությունը:

Այս ձեռագրի մասին հմմտ. նաև Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, հրատ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, էջ ԽԳ № 12-ի տակ:

Հաջորդ ձեռագրերի մասին տեղեկությունները քաղված են, բացի 9-ից և 10-ից, Մեսրոպ Տեր-Մովսիսյանի «Ձեռագրերի ցուցակից», որ ներկայումս պահվում է ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում[1]:

1) Երուսաղեմի ձեռագիր № 308, ՌԿԵ—1616 թ., թուղթ, բոլորգիր. գրիչ՝ Գրիգոր, ստացող Կարապետ վարդապետ Մոկացի, մականվամբ Կայօնեց: Բովանդակությունն է՝ Մովսես Խորենացի, Յաղագս զարմից սրբոյն Գրիգորի և տեսիլ Ս. Ներսիսի և այլն: Յառաջաբան տեսլեան Ս. Սահակայ Պարթևի հայոց կաթողիկոսի,—վերջում՝ վասն Ս. Մեսրոպայ որ Մաշթոց կոչեցաւ, Պատմութիւն սրբոյն Վարդանայ... յԵղիշայէ սրբոյ, Դութա երիցու հայցեալ: (Տես Մովսես Խորենացի, Տփղիս 1913, էջ ԽԳ, № 8):

2) Երուսաղեմի երկրորդ ձեռագիրը № 310 բոլորովին նման է նույն տեղի № 308 ձեռագրին: Թուղթ, նոտրագիր, ստացող Ակնեցի Հակոբ դպիր, գրված է ՌՂԸ—1649 թ.: Հմմտ. Մովսես Խորենացի, Տփղիս 1913, էջ ԽԳ № 9: Երուսաղեմի այս երկու ձեռագրերի մասին այժմ տես Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, երրորդ հատոր, կազմեց Նորայր եպիսկոպոս Պողարյան, Երուսաղեմ 1954, էջ 155—156 և 170:

3) Լիմ անապատում մի ժամանակ եղած ձեռագիրը, գրված ՌՃԺԲ=1663 թվականին: Հիշատակարանից հաղորդվում է հետևյալը. «...և արդ, ես մեղաւոր և անարժանս Մուսէս երէց Սպարտկերացի ցանկացող եղէ այսմ սուրբ տառիս չարչարանաց սուրբ Վարդանանցն, զոր ունէի փափագ ի բազում ամաց. և կամաւ կամեցողին բարեաց զսա բազում աշխատանօք յանձն առի նորոգեցի ի դուռն սրբոյն Գէորգայ զօրավարին ի Լիմ անապատ յիշատակ ծնողաց իմոց տէր Յովէփին, Ներգզին և կողակցին իմոյ Ամարին և ամենայն արեան մերձաւորաց իմոց... ի թուականիս Հայոց ՌՃԺԲ ի նահանջն ամին»:

4) Վարդանգիրք Եղիշէ, գրված ՊԼ (=1381) թվականին «ի քաղաքիս Վան, ընդ հովանեաւ Ս. Վարդանայ», ստացող Նիկողայոս արեղայ, որ այս գիրքը նվիրել է «Խառաբաստայ վանուց Ս. Աստվածածնին»: Այս ձեռագիրը հետո գտնվել է Խարբերդում (տես Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, հատ. II, էջ 334):

5) ԺԱ—ԺԲ դարում գրված մի ձեռագիր Լիմ անապատում: Այս ձեռագրի մասին ասված է միայն հետևյալը. «Ամբակազմ. այլ երեք տեղերէ գրցակ(?) թղթեր կարված, հանված: Ձեռագիրս գրված է միջին Մեսրոպ-

---

[1] Շնորհակալություն ենք հայտնում հիշյալ ինստիտուտի դիրեկտոր ընկ. Ս. Երեմյանին, որ մեզ հնարավորություն տվեց այս տեղեկությունները քաղելու Մեսրոպ Տեր-Մովսիսյանի «Ձեռագրերի ցուցակից»:

յան տառերով, 18-ական տող, գործը բավական հին, 11—12-րդ դարու գրված կթվի»: Նկարագրության մեջ ուրիշ տեղեկություն չկա:

6) Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում ՌՃԻԹ (=1680) թվին գրված մի ձեռագիր, որ պարունակում է պատմություն Եղիշէի, Խորենացւոյ, գրիչ Պետրոս:

7) Շերմազանյանի ցուցակի № 101-ը, ՌՃԽ (=1691) թվին գրված ձեռագիր, որ պարունակում է «Եղիշէի պատմութիւն նահատակութեան Վարդանայ» և «Մեկնութիւն բարձրացուցէք ճառին Դաւթի»: Թուղթ, քառածալ, 142 թերթ երկսյուն. գրիչ Մկրտիչ քարտուղար:

8) Կոստանդնուպոլսի Ազգային մատենադարանի հ. 136 ձեռագիրը, կաշեկազմ, թուղթ, 346 էջ, նոտրագիր, գրիչ Գէորգ Կոստանդնուպոլսեցի: «Եղիշէի պատմութիւն քաջին Վարդանայ» յօրինակէ իմեքէ հնագունէ, որ էր գրեալ յԱրարատեան աշխարհի ի թուին Հայոց ՈԺԶ (=1167) յաւուրս հայրապետութեան տեառն Ներսիսի եղբօր տեառն Գրիգորիսի ի Կլայս Հռոմէական»: Այս ձեռագրի համեմատ է կատարված Կոստանդնուպոլսի 1823 թվականի տպագրությունը (տես վերևում, էջ 13—14):

9) Վիեննայի Մխիթարյան մատենադարանում ԺԸ—ԺԹ դարի մի ձեռագիր, № 26 (հին թիվ 182): Վիեննայի Մխիթարյան Հակոբոս Տաշյանը հետևյալ կերպ է նկարագրում այդ ձեռագիրը[1].

«Թուղթք՝ այժմ 87, մեծություն՝ 22×16, միասյուն, ժամանակ՝ անծանոթ, հավանորեն ԺԸ—ԺԹ դարից: Գրիչ, տեղ և տէր՝ անհայտ: 1ա ունի երկու անգամ կնիք «Յովհաննէս Գր. Արծրունի. 1867»: Կողին ներսի կողմը գրված՝ «1873. երեր Վ. Հ. Սիմոն Վ.»:

Բովանդակությունն է՝ Եղիշեի պատմություն Վարդանանց, այժմ պակասավոր. I և III եղանակները պակասավոր են, IV-ը բոլորովին պակասավոր է, 3 էջ է մնացել միայն: V յեղանակի սկիզբը պակասավոր է, VIII յեղանակի վերջն է պակաս»:

10) Եղիշեի մի լրիվ ձեռագրի մասին տեղեկություն է հաղորդում «Բազմավեպ»-ի 1931 թ. հունիս ամսի համարում (էջ 265—267) Իրազեկ ստորագրությամբ Հ. Տեր-Հակոբյանը: Այդ տեղեկությունից քաղում ենք հետևյալը.

Ամբողջ ձեռագիրն ունի 567 երես, մեծությունը՝ 21×16, գրությունը՝ երկսյուն 15×11, երկու սյունակների միջև կարմիր զույգ գծերով լուսանցք: Գրության ժամանակը՝ ՌՃԽԶ (=1697) թվին: Տեղը՝ Աստապատ: Գրիչը՝ Սարգիս: Ստացող՝ Հովսեփ աստվածաբան վարդապետ: Գիրքը լավ է պահված, անթերի է. ունի հիշատակարան (էջ 287—288) և հիշատակագրություններ:

Ձեռագրի բովանդակությունն է՝ Ագաթանգեղոս (էջ 1—287), Դաշանց թուղթը (էջ 289—304), Յաղագս զարմից սրբոյն Գրիգորի և տեսիլ սրբոյն Ներսիսի և բովանդակ պատմութիւն ազգին Մամիկոնէից մինչև ցսուրբն Վարդան...(էջ 305—360): Յառաջաբան տեսլեան սրբոյն Իսահակայ Պարթևի Հայոց կաթողիկոսի (362—375), Տեսիլ Սահակայ Պարթևի (376—380), Մեկնութիւն տեսլեան սրբոյն Իսահակայ Պարթևի (380—388), Վասն սրբոյն

---

[1] Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, կազմեց Հակոբոս Տաշյան, Վիեննա, 1895, էջ 146—147:

Մեսրոպայ, որ Մաշտոց կոչեցաւ (389—390)և վերջապես Եղիշեի Պատմությունը, «որի 8 յեղանակները լրիվ կան» (էջ 390—562)։

Եղիշեի վերնագիրն է՝ «Պատմութիւն սրբոյն Վարդանայ քաջի և Հայոց սպարապետի, և վկայի Քրիստոսի յԵղիշայէ[1] սրբոյ Դաւթայ երիցու հայցու(!) հայցեալ գրեաց»։ «Լուսանցքներում հաճախ հանդիպում են բնագրում եղած դժվար, մանավանդ պարսկերեն բառերի բացատրությունները կամ թարգմանությունները, օրինակ՝ Զրուան մեծ աստուածն=Կռոնոս կամ Արամազդ. վզըրկ (վզրուկ)=մեծ. երան և տաներան=մեծարոյ և պատուական և այլն»։

Էջ 563 «Արդ գրեցաւ Ագաթանգեղոս գիրքս ի թուականութեանս Հայոց ՌՃԽԶ ի գյուղաքաղաքս Աստապատ, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի և սրբոց հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի»...։

Պետք է ենթադրել, որ այս ձեռագիրը նույնն է, որ համեմատել է Կարապետ վ. Եսայանը (տես վերև, էջ 47, կետ Ե)։

29. *Անցնում ենք այժմ ճառընտիրներին, որոնց մեջ պահված են նաև Եղիշեից խոշոր հատվածներ, մեծ մասամբ հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ յեղանակները և ութերորդ յեղանակից Ղևոնդյանց ամբողջ նահատակությունը, ընդամենը 85 էջ (98—183) ընդհանուր 204 էջից։*

ՀՍՍՌ Պետական ձեռագրատանը կա մոտ մի հարյուր ճառընտիր և տոնական, որոնցից 28-ի մեջ կան մեր հիշատակած խոշոր հատվածները։ Ստորև տալիս ենք այդ ճառընտիրների համառոտ նկարագրությունը։

ճ^{1} № 3779, ամենալավ ճառընտիրներից մեկը։ Թերթեր՝ *546,* մեծություն *47×31×10, թուղթ,* կազմը՝ *կաշեպատ տախտակ,* գրություն՝ *38×9, բոլորգիր,* գրիչներ՝ *Աստվածատուր, Կարապետ, Ստեփաննոս, Ղազարոս և այլք.* ստացող՝ *Տուրք.* ժամանակ՝ *ՈՀԶ=1227,* տեղ՝ *Դարանաղիք (Ակնագ վանք).* հիշատակարաններ *և* հիշատակագրություններ՝ *բազմաթիվ էջերում, օրինակ՝ $52^{\text{ա}}$, $169^{\text{ա}}$, $194^{\text{բ}}$, $215^{\text{բ}}$, $360^{\text{ա}}$, $368^{\text{ա}}$, $370^{\text{բ}}$, $429^{\text{բ}}$, 546 և այլն.*

985—1043 էջերում գտնվում են Եղիշեի հատվածները։

ճ^{2} № 6196 (589). թերթեր՝ *611,* մեծություն՝ *50×33×12, թուղթ,* կազմը՝ *կաշեպատ տախտակ դրոշմազարդ,* գրություն՝ *երկսյուն 38×10, բոլորգիր,* գրիչ՝ *Ղազար (Սարգիս?),* ստացող՝ *Վարդան վ., $202^{\text{բ}}$* վերջին ստացող՝ *Նափոս.* ժամանակ՝ *ՈՀԶ=1227,* տեղ՝ *Խլաթ(?),* հիշատակագրություններ՝ *լուսանցքներում, վարքերից շատերի վերջում. 611 նորագույն (Սարգիս գրչի) հիշատակարանը։*

Եղիշեի հատվածները գտնվում են $524^{\text{բ}}$—$548^{\text{ա}}$ էջերում։ Ընթերցվածները մեծ մասամբ նման են ճ^{1}-ին.

ճ^{3} № 4871 (143) (716). թերթեր՝ *542,* մեծություն՝ *32×23×12, թուղթ,* կազմը՝ *կաշեպատ տախտակ դրոշմազարդ,* գրություն՝ *երկսյուն 25×8,5, բոլորգիր.* գրիչ՝ *Հովհաննես քահանա,* ստացող՝ *Ոստակես և այլք,* ժամանակ՝ *ԺԳ դար,* հիշատակագրություններ՝ *$11^{\text{ա}}$, $65^{\text{ա}}$, $148^{\text{ա}}$ և այլն։*

---

[1] *«Բազմավեպում» տպված է «յԵղիչայէ». անհայտ է մնում՝ տպագրական վրիպակ է, թե ձեռագրի սխալ։*

Եղիշեի հատվածները գրավում են 151^{բ} —158^{ա} էջերը։ Խիստ համառոտած, բազմաթիվ էջեր բաց թողնելով, տրվում է նախ Ղևոնդյանց, ապա Վարդանանց պատմությունը։

Ճ^{4} № *4709 (590) (206)*. թերթեր՝ *636*, մեծություն՝ *47,5×33, թուղթ*, կազմը՝ *կաշեպատ տախտակ*. գրություն՝ *երկսյուն 36×10, խոշոր բոլորգիր*, գրիչ՝ *Հովհաննես (611^{բ}), Դիոսկորոս (415^{ա})*, ստացող՝ *Էլմելիք*, ժամանակ՝ **ՉՂԳ=1344**. հիշատակագրություններ՝ *բոլոր հատվածների վերջում։*

260^{ա} —271^{բ} Եղիշեից (Ղևոնդյանք) և 276^{ա} —285^{բ} Վարդանանք։ Չունի 110—113 և 122—133 էջերը։

